



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



33

2531

2532

2533

84  
4L-79

10

12





685

# ԱԼՂԻՐ

ԿԱՐ

## ԱՄԵՐԻԿԱՑԻՔ

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

### ՎՈԼԹԵՐԻ

ՔԵՐԹՈՂԻ ԳԱՂԴԻԱՑԻՈՅ

ԹԱՐԳՄԱՆԵԱՅ

### Տ. ՏՈՄԻՆԵԱՆ



ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՈՒԽԵՆԻ Յ. ՔԻՒՐՔՃԵԱՆ

Կ.-ՊՈԼԻՍ, ՖԻՆՃԱՆՑԲՐԱՐ



428 9  
39

— 2011 —

ԱՅՆ ԱՐԱՐԱԿԱՆ

ԲԻՆԱՐԵՐԵԱՆԸ ԶԱՐՄԱՐԻ

ՓԱՐԵԼԱ ԽԵՂԻՆԵԴ

ՅԱՆԿԵԴԱ ՍԻՐՈՅԵ

ԱՀԳԱՍՏԻՐ ԸՂՋԻՑԴ

ի

ՊՍԱԿ

ԱՊԱԽԵՆ ԴԱՐԱՅ

ՅԱՒԵՐԺԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿ

ՀԱՌԻՖԻՔԵԱՆ ԶՈՒՆԱԿ

ԶԴՈՅՁՆ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՍ

ՔՈՅՏԻԴ

ՄՏԵՐՄՈՒԹԵԱՆ ԵԱԽԵԶՈՐԴ

Ծ. ՅՈՄԻՆԵԱՆ

— 1862 —

2003

706 - UZ



## ՅԱՌԱՋԱԲԱՆ

# ԹԱՐԴՄԱՆ ՀԻՆ

Հասաւ ժամանակ մը յորում քաղաքականութիւնը  
 Հայ ազգիս մէջն ալ վերջապէս սկսաւ ծաւալիլ:  
 Խմացաւ այդ ազգը որ խռովութիւն պէտք էր, պա-  
 տերազմ ու ապատամբութիւն պէտք էր տղիտու-  
 թեան դեմ եւ քաղաքականութեան գէնքերովը վա-  
 ռեալ՝ վերջապէս յաղթական ողջունութիւն յուսա-  
 լով՝ կարշակէ դեռ այդ մտաց խաւարին ասպարե-  
 զը: Իւր արշաւանցը մէջ ստացն Հայրենեաց զա-  
 դափարը, մանաւանդ թէ ճանչցաւ իւր կիսամեռ  
 Հայրենեաց յարգը. խառնեց լիշտակաց մոխիր-  
 ները, արքնցուց նախահարց արձագանզը, ճայն  
 տուաւ թմրեալ սրտից եւ քայլ առ. քայլ ինչուան  
 խմաստութեան մատենին էջերն բղբատել յանդգնե-  
 ցաւ. գուաւ իւր անցելոյն մէջ նախահարց պատ-

մուրինը, դպրուրիւնքը, ճաշակն ու սովորուրինը եւ խր հնացեալ փառքը։ Տաղանդն առաւ իրեն առաջնորդ, գեղեցիկ դպրուրիւնքն ըրաւ սընունդ սրտի, զմայյումն հոգւոյ. վերջապէս այս դարուս մէջ ազգասիրական ոգույն մնացորդ կայծերն արծարծելով հրաւեր կարդաց յօժար եւ լըրջամիտ երիտասարդաց Միջագիւղի Դպրոցին մէկ սրահին Թատրոնի անուն տալ եւ Բերտյի Թատրոն Արեւելեան անուամբ կանգնած վարժարանին սիւն եւ նեցուկ ըլլայ, վասն զի արդարեւ Վարժարան մըն և այդ սրահը ուր Ալզն կը գումարուի, ուր միտքն կը գարգանան եւ սրտերն կազնուանան։

Յառաջ, յառաջ, Հայ աշխարհիս պարծանք, շարունակենք սիրել գիտուրիւնը, մշակել գեղեցիկ դպրուրիւնքը. սակայն եւ այնպէս զգուշանալ մախանց ժանիքէն, չտալ տեղի զրպարտուրեան լեզուին, արգասաւորել ելքն աշխատանց եւ ազգասէր սրտից մէջ խնդրել քրտանց իրաւունքը; վասն զի գարզացեալ միտք եւ ազնուացեալ սրտեր ոչ երբէր ՚ի դերեւս յուսացին, ազգախնամ եւ կենցադօգուտ գործոց յառաջացմանը մէջ գտան իրենց արդեանց վարձն եւ պսակ. ինչպէս նաև քարզմանուրեանս Հեղինակն՝ նասարակաց բարիքն նըսպատակ ունենալով՝ մոռցաւ առժամանակեայ վարձն եւ յետազայ դարերու թողուց իւր վաստակոց փոխարէնը. գրերէ իւր ամեն գրուրեանը մէջ կը

տեսնո՞ի մարդկութեան սէրը Եւ մարդկութիւնը Եր-  
ջանկացնելու փափարը: Եւ Ես ինքնին նոյն ոգուվ  
վառեալ, տկար զրչիս ապահնած, աշխատեցայ  
պահել ողբերգութեան ոգին Եւ բնագրին անու շոմը.  
աշխատեցայ յոտանաւորէ յարձակ փոխեալ ազատ  
քարզմանութեանս պարզ Եւ դիւրիմաց լեզուին բարձ-  
րութիւնը զրուածոյն վսկմութեանը հասցնել: Յան-  
դմոցն ձեռնարկութիւն, Եւ սակայն ազգայնոց նե-  
րողամտութեանը յուսացի հանդիպել այսպիսի ող-  
բերգութիւն մը ընտրելով ուր առաքինութիւնն է  
իւր առաջնորդ, սէրն իւր ոգին, հաւատքն իւր նը-  
պատակ, ուր տարակրօն ազգ մը բարոյական ազ-  
դեցութեամբ զրգուուած ճանչցաւ վերջապէս անե-  
թեսոյք հութեան զօրութիւնը:



## ԱՆՁԻՆՔ

---

ԿՈՒՍՄԱՆ.	Կուսակալ Բերուի.
ԱԼՎԱՐԵ.	Հայր Կուսմանի.
ԶԱՄՈՐ.	Իշխան Բողոքի մեկ մասին.
ՄՈՆԴԵԶ.	Իշխան ուրիշ մասի մը.
ԱԼԶԻՐ.	Դուստր Մոնդեզի.
ՃԵՖԱՆ.	Մտերիմ Ալզիրի.
ՍԵՏԱՐ.	Մտերիմ Ալզիրի.
ՄԻԳՐԱՆ.	Սպայ.
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԸ.	Խօսող.
ՍՊԱՆԻԱՑԻՔ, ԱՄԵՐԻԿԱՑԻՔ, ԶՕՐԱԿԱՆՔ.	

Տեսարանն է՝ ՚ի Լիմա  
Յապարանս Կուսմանի:

# Ա Է Զ Ի Ւ

## ՀԱՆԴԵՍ ԱՌԱՋԻՆ

ՏԵՍԻ Ա.

ԱԼՎԱՐԵ ԿՈԽՍՄԱՆ

ԱԼՎԱՐԵ

Վերջապէս Մատրիտի վերին ատեամը զքեզ ինչ  
ծի յաջորդ ընտրեց , որդեակ իմ կուսման , թող քե-  
զի հետ իշխէ Աստուած այս նոր աշխարհիս վրայ ,  
վասն զի իւր հարասութեամը հետ ունի նաեւ թըշ-  
տառութիւնք եւ ոճիրներ : Քեզի կը յանձնեմ , որդ-  
եակ իմ , իշխանութեանո բարձր աստիճանը յորմէ հը-  
քաժարել կատիպէ զիս իմ ծերութիւնս : Ճողովը կեա-  
նըս բարեոյն համար մաշեցաւ կեանքս , բայց չկըր-  
ցայ յառաքինութիւն վոխել իմ մոլի դիւցազանցո  
անսամնձ քաջութիւնը . յաղթութիւնը գրաւեց սըր-  
տերնին , անդթութիւնը խաւարեցուց իրենց փառ-  
քը . երկար ատեն լացի եւ այդ տիսուր յաղթամակ-  
ներուս վրայ , եւ ահա մօտեցան կենացս վերջին օ-  
քերը , այսուհետեւ ներեզմանն է իմ յետին ապաւէնս ,  
եւ գոհ սրտով կիշնամի հոն եթէ արդար օրինօք կա-  
ռավարես տէրութիւնդ ու թուգաւորացդ քաղաքը :

## ԿՈՒՍՄԱՆ

Հայր , քեզի հետ տիրեցի այս նոր աշխարհիս ,  
քեզի հետ վարժեցայ յաղթել , յառաջ քան օրէնք-  
ներ տալու քու օրինացդ կը կարօտիմ ես :

## Ա.ԼՎԱՐԵ

Ոչ այդպէս , որդեակ իմ , ինքնիշխան է միապե-  
տութիւնը . աշխատանքէ մաշած , ցուրտ տարիներու  
ծանրութեանը տակ ձնչուած , յոգնած եմ իշխանութե-  
նէ . խորհրդարանիդ մէջ միայն բաւական ըլլայ քե-  
զի իմ ձայնս : Ալ տկարութեանս մնացորդ տարինե-  
րը իմ Աստուծոյս կը նուիրեմ ես զոր այնչափ ա-  
տեն մոռցայ : Բայց իբրեւ Հայր եւ իբրեւ բարեկամ  
չնորհք մը կը ինդրեմ քեզմէ . այս օրուան բռնուած  
Ամերիկացի գերիները ինծի յանձննէ . այս օրս բարե-  
դուշակ օր մը ըլլայ . մոռցիր այսօր արդարութիւնը  
ու ներողութիւնը լիչէ միայն :

## ԿՈՒՍՄԱՆ

Եւ ինչպէս մերժեմ քու աղաչանքդ , բայց մտածէ  
Հայր , ինչ կը խնդրես ինծմէ . կուզես ներել ամեւ-  
րիկացւոյն որպէս զի իւր արշաւանքն տարածէ ինչ-  
ուան իմ նորածին ու խարխուլ տէրութեանս մէջ .  
հաւատան ինծի , Հայր իմ , երբ այդ դուռող ժողո-  
վուրդը վարժի սուր շարժել , արիւն տեսնալ , նոյն  
իսկ իւր տիրոջը արիւնը բաւական պիտի չըլլայ իւր  
ծարաւը յագեցնելու համար . անվախ ու համարձակ  
պիտի յանդզնի արշաւել երկիրս . քայքայել դահս ,  
փշել ձեռքիս գաւազանը ու գերութեանը լուծը

ձգել ժողովրդեանս վիզը : Հիմակուընէ ահ ու սարսափի թող պատէ զիրենք, վրէժխնդրութեան կայծակներ թռչին մեր ձեռքէն եւ վարժին դողալ մեր անունը լսելով . դեռ վայրենի դազան մըն է այդ բիրտ ամերիկացին որ սարսափելով կը խածնէ զերութեան սանձը . վերջապէս այդ սարսափը ներողութամբ կը նուաղի, խստութիւնն է միայն հնագանդութիւնը անգրդիո պահողը :

## Ա.Լ.Վ.ԱՐԵ

Ա՛հ, որդեակ իմ, կատեմ ես այդ բռնաւորական խստութիւնը . կրնան դուն սիրել անիրաւութիւնը, դուն, քրիստոնեայ, դուն, ընտրեալ յանուն Աստուծոյ եւ խաղաղութեան ասկէ վերջը նոր քրիստոնէից վրայ իշխելու համար . դեռ չկշտացան աչուըներդ կոտորած տեսնելէն որ ամայեցուց այս երկիրս: Եւրոպիոյ ու քրիստոնէի անունը ատել տալու համար ուրեմն թողուցի արեւելքն եւ յայս կուապաշտ աշխարհս եկայ . ահ, Աստուած զմեզիրկեց հոսիւր անունը հռչակելու, իւր օրէնքները սիրել տալու համար, եւ մենք՝ անհաշտ ապականիչք, ծարաւի արեան եւ ոսկւոյ, անկախ յօրինաց, վոլսանակ որսալու այդ ժողովուրդը՝ սատակումն ու մահ կսպանանք իրեն: Մենք՝ իւր դաշտերը ու բլուրները արեամբ ներկեցինք . մենք՝ այնչափ քաղաքներ յաւեր ու 'ի կործան դարձուցինք . եւ դեռ վրէժխնդիր կայծակ մը չի ջաղխեր մեր գլուխը . միրաւի մեր անունը սարսափ մը կազզէ հարատահարելոց բայց եւ զգուռմն միանգամայն: Մենք՝ նոր աշխար-

հիս հարուածը՝ քան զամերիկացիս աւելի բարբարոս ենք, որ թէպէտեւ գաղան եւ վայրենի՛ սակայն ունի քաջութիւն եւ առաքինութիւն։ Աւաղ, թէ որ քեզի պէս արեան ծարաւը ունենային, թէ որ յառաքինութենէ ամենեւին զուրկ ըլլային, դու, Հայր պիտի չունենայիր հիմայ։ Մուցմբ արդեօք որ այդ կարծեցեալ գաղանները իմ կենացս խնայեցին։ մուցմբ արդեօք որ իմ քաջերս կորանցնելով, բարբարոսաց կատաղութենէն պաշարուած, մինակ ու անօդնական մահուանս կապասէի, երբ իմ անունը որդեակ իմ, իմ անունս միայն զինաթափ ըրաւ զիրենք։ Եւ անոնց մէջէն երիտասարդ պատանի մը, աշուշները արցունքով լեցուած առաջեկաւ եւ փոխանակ զիս սպաննելու, ծնկուշներուս պլուելով և Ալվարէ, ըստ, դժւն ես, Ալվարէ, ապրէ գուն, քու առաքինութիւնդ հարկաւոր է մեզի, ապրէ, եւ հայր եղիր թշուառ ազգիս։ թող բանաւոր ժողովուրդդ որ զմեզ կը հալածեն ու մեր ազատութիւնը շղթաներու զարկին, մեզմէ սորվին անօրինացներելը։ Պնա, իմ ժողովուրդս զոր բարբարոս կոչեցին, թերեւս իրենցմէ աւելի մեծահոգի ու վեհաճածըն է» կը հառաջես, որդեակ, սիրադ ակամայ կը խռովի, խղճիդ խայթերը կարթնաման, ահ, թէ որ անդժութիւնը այդչափ սիրելի է քեզի, թուչպէս կը յանդգնիս այս արիւնամներկ երկրիս թագաւորազն աղջմը զօր բաղդը քու ձեռքդ մատնեց՝ հարմացընել քեզի։ Խը հայրենակցաց արեամբը հարսանեացող կապերը կուզես հաստատել։

## ԿՈՒՍՄԱՆ

Բաւականն է, Հայր, դու հրամայեցիր, կոտրեցի  
անոնց գերութեան լուծը . բայց օրէնքն կը պահան-  
ջնն որ քրիստոնեայ ըլլան . կռապաշտոթիւնը թող-  
լով կրնան կենաց արժանի ըլլալ : Յոնադատենք,  
Հայր՝ հրամայենք, որսանք զիրենք մեր կրօնիցը .  
կուղեմ որ իմ օրինացս հնաղամդող մահկանացուք,  
դողան իմ եւ Ասառւծոյ զօրութենէն :

## Ա.Վ.ԱՐԵ

Մտիկ ըրէ, որդեակ իմ, ես քեզմէ աւելի կը փախա-  
քիմ որ ճշմարտութիւնը տիրէ այս երկրիս վրայ . ես  
ալ աշխատեցայ Երկնից հետ հաշտեցընել այդ ժողո-  
վորդը բայց ոչ ոք բռնադատեցի, ոչ ոք :

## ԿՈՒՍՄԱՆ

Ամեն կարծր սրտերն կը կակուզցընես դուն, Հայր, նե-  
րողամիտ առաքինութիւնը քու բերնովդ կը խօսի, եւ  
որովհետեւ Երկինք այդպիսի համոզիչ ձիրք մը շնոր-  
հեր են քեզի, քեզմէ ուրեմն կսպասեմ իմ կենացս  
երջանկութիւնը : Ճրաշագեղ Ալզիրն բռնի ինծի հարս-  
նացընելով չեմ կրնար երջանիկ ըլլալ ես . այն  
կը սիրեմ զինքը, բայց չեմ կրնար խոնարհիլ իւր գե-  
ղեցկութեանը դիմաց . մէկ նայուած քով սողալ իւր  
ոստըներուն տակ, շողոմնել իւր դոռողութիւնը, եւ  
իբրեւ գերի զիս իւր գեղեցկութեանը յամշնել .  
Բայց դուն, վերջին անգամ ալ խօսէ Ալզիրի հօրը  
Մանդէզին հետ . թող համոզէ իւր աղջիկը, խնդրէ  
իրմէ . . . սակայն ինչ անարդութիւն . աղջկան մը  
համար աղաչել :

## ԱԼՎԱՐԵ

Արդէն խօսեցայ ես Մոնղէզին հետ, եւ որսացի զինքը իւր գերեալ ընտանեաց թշուառութիւնը խնաշ մելով. թողուց Մոնղէզ իւր սուտ աստուածները ճանչցաւ ճշմարիտ Աստուածը, եւ ինքը անձամբ իւր կուրացեալ աղջկան միտքը լուսաւորեց. Ալզիր բացաւ աչուըները, իմացաւ իւր աստուածոց ունայնութիւնը, ճշմարտութեան ճառագայթներ իջան այն փափուկ սրտին մէջ որ քու սրտիդ հետ պիտի միանայ այսօր: Բայց ահա հոռ կուդայ Մոնղէզ, գնան, որդեակ, սպասէ տաճարին մէջ ուր քիչ ատենէն պիտի տեսնաս զինքը ու իր աղջիկը:

## ՏԵՍԻԼ Բ.

ԱԼՎԱՐԵ, ՄՈՆԴԻԶ

## ԱԼՎԱՐԵ

Մօտեցիր, սիրելիդ իմ Մոնղէզ, լսեմ քու բերնէդ իմաստութեանդ պտուղը. հայրական իշխանութիւնդ յուսամ որ փոխեց աղջկանդ միտքը:

## ՄՈՆԴԻԶ

Թշուառացելոց Հայր, ներէ թէ որ իմ աղջիկս. որուն ընտանիքը բնաշինչ ըրաւ կուսման, զեռ եւս սարսափ մը կզգայ իւր անունէն եւ դողդոջոն քայլերով կը մօտենայ իւր տիրոջը. Առաջարկեալ հարսանիքը զայրացուց աղջկանս սիրտը, բայց քու ճայնէդ անհետացան ամեն կասկածք եւ կարծիք, կենացդ վար-

Քը սորվեցուց մեղի յարգել եւ մեծարել քու օրէնք-ներդ . քեզմով ճանչցանք Երկինքը , քեզմով նոր յոյս մը փայլեցաւ սրտերնուս մէջ , քեզմով նոր արեւ մը ծագեց մեր խաւար հոգիներուն վրայ : Բայց քու քաղաքակցացդ աստուածը տարբեր է քու Աստուածմէդ , վասն զի արիւն կը շնչէ նա , եւ ես կատեմ այդ աստուածը , իսկ քու Աստուածդ , ով պատկառելիդ Ալվարէ , հեղէ եւ խոնարհ , որով եւ ինծի ու իմ ժողովրդեամսս սիրելի . ահաւասիկ ինչպէս գրաւեցիր զիս ու իմ աղջիկս , ալ քու ընտանիքդ եւ դանք , զու ալ Հայր եղեր մեղի , այսպէս կուտամիմ՝ աղջիկս որդւոյդ , իւր սիրոյն կը յահճնեմ զինքը , եւ իրեն օժիտ բողոք եւ բերու . դնա , քու տաճարիդ մէջ , պատրաստէ հարսանեացդ հանդէսը . ապահով եմ որ իմ աղջիկս ամուսին եւ աէր պիտի ճանչնայ քու որդիդ :

## ԱԼՎԱՐԵ

ԱՌ , որովհետեւ ձեռուըներս կրցան հիւսել այդ սիրոյ կապերը , այսուհետեւ զո՞ն եւ ուրախ սրտիւ կը մեռնիմ , սիրելիդ իմ Մոնդէդ : Մնաս բարով . ով Աստուած , տարածէ բարերար ձեռուըներդ երկու ամուսնաց գլխուն վրայ :



## ՏԵՍԻԼ Գ.

## ՄՈՒԴԻԶ

Թշուառ կենացս վերջին տարիները մի դառնա-

ցընէք ով Երկինք . զուրկ յամեն մխիթարութենէ  
աղջիկ մը միայն մնաց ինծի , դուք առաջնորդ եւ  
զէք իւր սրտին :

ՏԵՍԻԼ Դ .  
ՄՈՆԴԻԶ , ԱԼԶԻԲ

ՄՈՆԴԻԶ

Դուստր իմ , հասաւ ժամանակը . մի մերժեր եր-  
ջանկութիւնդ , եւ կամ երանելի թագուհի երջանիկ  
ըրէ զաշխարհո . պաշտպանէ յաղթուողները , հրա-  
մայէ յաղթողներուն , մարէ անոնց ձեռքին մէջ ա-  
պականիչ կայծակները , թշուառութեան ծոցէն ել  
թագաւորաց կարգն բարձրացիր . դուն քեզմէ հրա-  
ժարէ , դուստր իմ , ու նոր սիրու մը առ . սրբէ այդ  
արցունքներդ , Ալզիր . տես քու Հայրդ է . . . .

ԱԼԶԻԲ

Բոլոր արիւնս քուկդ է , Հայր , բայց թէ որ կը  
սիրես զիս , թէ որ հայրական գութը գեռ կը խօսի  
որտիդ մէջ , տես իմ յուսահատ վիճակս , կարդա սըր-  
տիս տագնապը ու մի բռնադատեր զիս :

ՄՈՆԴԻԶ

Զէ , չեմ ուզեր այդ ամօթալի ցաւդ տեսնալ .  
խոստացար ինծի , պէտք է կատարես խոստմունքդ :

ԱԼԶԻԲ

ԱՇ , այդ խոստմունքը բռնի էր , Հայր . . . բայց  
ով Երկինք , ինչ օր , հարանեաց խոստմունքը կա-

տարելու . այս օրս՝ սոսկալի օր մըն է . Հայր , այս օրս՝ ամբարտաւան կուսմանը բնաջինջ ըրաւ իմ ընտանիքս , հիմն 'ի յատակ կործանեց իմ Հայրենիքս եւ կուզես որ . . . ո՞հ , դիտեցիր Հայր , այս առաւօտ սարսափելի երեւոյթներ նկարուած էին արեւուն լուսաճաճանչ սկաւառակին մէջ :

## ՄՈՆԴԵԶ

Մեղմով երջանիկ կամ թշուառ կըլլան օրերը , դուստր իմ , թող այդ ունայն կարծիքներդ զոր անտեղի հաւատոց ալաշտօնեայք տպաւորեցին մտքիու մէջ :

## ԱԼԶԻՐ

Նոյն օրը , մ՞ն , աւաղ , տէրութեանդ վրէժխընդիրը , Զամոր՝ իմ յոյսս , Զամոր , իմ սիրելիս , զոր դունքեղի վեսայ ընտրեցիր , մեռաւ պատերազմին մէջ :

## ՄՈՆԴԵԶ

Ես ալ քեզի սկէս իւր մօխիրը ջերմ արցունքներովս թրջեցի . բայց իւր գերեզմանին խորերէն Զամոր քեզմէ հաւատարմութիւն չի պահանջեր . սիրու առ դուստր իմ , մարէ՛ անյոյս սիրոյդ մնացորդ կայծերը . Աստուած իմ բերնովս կը հրամայէ քեզի կուսմանի ամուսինը ըլլալ , մտիկ ըրէ՛ իւր ձայնին :

## ԱԼԶԻՐ

Ո՞հ , Հայր իմ , Բնչու կստիպես դիս . դիտեմ ինչ է Հայր եւ ինչ անոր զօրութիւնը . երբ արիւնս թափել հրամայես՝ պատրաստ եմ ինքզինքս զո՞հ նուիրել հայրական սիրոյ խորանին : Ինչուան հիմայք քուերջանկութիւնդ իմ երջանկութիւնս չէր , միթէ քե-

զի համար չթողուցի չուրացմայ իմ աստուածներս ։  
 Զեմ ցափի աստուածոցս փառաց կորստեամբ վրայ ,  
 բայց դուն , Հայր իմ , դուն որ սրտիս դառն տառա-  
 պանաց ատենը նոր Աստուածմէս խաղաղութիւն կը  
 խոսանայիր ինձի , որ իւր օրէնքն սուրբ եւ սփո-  
 փիչ անմիսիթար սրտից վէրքերը կը պատէ կըսէիր,  
 ուրեմն զիս , տկար աղջիկս , կը խարէիր , Հայր . ահ ,  
 ուր որ երթամ , նոր Աստուածոյս տաճարին մէջ նաեւ ,  
 անուն մը , յիշաատկ մը , կը փշրէ կտոր կտոր կընէ  
 այս սիրտս , այս սիրտս ուր Զամոր իմ սիրոյս մէկ  
 հատիկ Աստուածը կենդանի է դեռ . այն , Զամոր , հոս  
 պիտի չի մեռնիս դուն . գքեզ մեռցընելու համար  
 նախ պէտք է իմ սիրտս հաղար սրով վիրաւորել . . .  
 մնդագրէ Հայր , թէ որ կրնաս այս անբիծ զգաց-  
 մունքու , մահուան եւ ժամանակի յաղթող այն ան-  
 շէջ կրակը , այս անմահ սէրս զոր դուն հրամայեցիր ,  
 դուն ինձի տուփիր այդ վեսայն , տէր եւ ամուսին  
 այս կոցս սրտիս եւ մարմնոյս . . . եւ սակայն բռնաւո-  
 րի մը գիրկը կը նետես քու աղջիկդ . . . Հայրենի-  
 քըս կը պահանջեն , պէտք է հնազանդիլ . բայց դո-  
 դա Հայր , դուն՝ որ անծանօթ աստուծոյ մը վրէժ-  
 իսնդրութիւնը կը քարոզես , դուն՝ որ կը հրամայես  
 ինձի երթալ իւր խորանին դիմաց այդ ամուսնոյն  
 խոսանակ սիրտ մը որ ուրիշի մը համար կայրի ու  
 կը մրկի :

## ՄՈՒԴԵԶ

Ա՛հ , դուստր իմ , Բնէ կը խօսիս . լնայէ իմ ծե-  
 րութեանս . յանուն բնութեան , յանուն սիրոյս , յա-

նուն մեր թշուառութեանը զոր դուն միայն կրնաս  
մեղմացնել , յանուն հայրական սրտիօ զոր անբոյժ  
վէրքերով խոցեցիր , մի դառնացներ կենացս վեր-  
ջին օրերը . վայելէ իմ աշխատանացս պը-  
տուղը , բայց մի թունաւորեր այդ երջանկութիւնը  
զոր քրտամբս պատրաստեցի քեզի . չես լսեր հայ-  
րենեացդ հեծութեան ձայները , միայն 'ի քեզ կը  
յուսայ . կուզես մատնել զինքը . . . բայց ահա կուս-  
ման . ինքինքիդ եկուր , դուսար իմ . . . :

## ԱԼԶԻՐ

Բայց , ով Աստուած , ինչպէս կեղծեմ :

---

ՏԵՍԻԼ Ե·  
ԿՈՒՍՄԱՆ , ԱԼԶԻՐ

## ԿՈՒՍՄԱՆ

Համբերութեանս չափը լեցուեցաւ . այդ չափ ամս-  
փոյթ դանողալութիւն իմ վասփաքներս կատարելու .  
իմ թագիս թշնամեացը ծանր յանդգնութիւնը պա-  
տուհասելու . համար լոեցուցի օրէնքն , խնայեցի ա-  
նոնց կենացը , ձեր ներումն խնդրելուն համար .  
բայց այդ թեթեւ չնորհքովս քու սիրտդ շարժել  
ուղելը՝ նախատինք կը համարիմ ես իմ արքունի  
գառագանիս . եթէ ուղենամ իշխանութիւնս դործա-  
ծել , ով է ինձ արդելք . բայց ես կուզեմ դքեզ 'ի  
սիրոյդ ընդունել . եւ սակայն չէի յուսար այդ չափ  
ծանր գնել իմ երջանկութիւնս :

## ԱԼԶԻՐ

Ո՞ւր էր թէ վլրէժիմնդիր կայծակ մը չիջնար այսօր մեր գլխոյն վրայ . կը տեսնան թէ Բնչ սարսափ կը պատէ զիս . տես այդ սարսափը աչուըներուս մէջ ու ճակտիս վրայ նկարուած . կեղծել , անհնարին է ինծի . նենդաւոր որտից արուեստը ինծի համար չէ :

## ԿՈՒՍՄԱՆ

Կը ճանչնամ քու համարձակախօսութիւնդ , Ալ զիր . զիտեմ որ դեռ կը յիշես Զամորը եւ կը զըգուեսու իւր յիշատակը . Զամոր , խմսիրոյս յամառ խոչընդուն՝ պատերազմաց մէջ յաղթուած՝ դերեզմանին յանդունդներէն դեռ ինծի դէմկը զինուի . կենադանին՝ յաղթեցի իրեն . մեռած՝ պէտք է որ դողամ իրմէ . դաղրեցուր նախատինքդ , Ալզիր . քու անձիդ պատիւն ու փառքը , իմ անունս ու սիրտս անարդեցիր միանդամայն . եւ սակայն այս սիրտս կը նախանձի թափած արցունքներուդ վրայ որ Զամորի համար են :

## ԱԼԶԻՐ

Մի այդչափ զայրանար ու նախանձիր . շիրմի մէջ փակուած նախանձորդ մը՝ չկրնար այդչափ տենչ եւ զայրոյթ ազգել հզօր աշխարհակալի մը որտին . այս , սիրեցի ես Զամորը , վասն զի իմ թշուառ հայրենեաց միակ յոյսն է Զամոր , եւ իմ հայրս զիս իրեն խոստացաւ . Զամոր սիրեց զիս , ով հեշտութեանս . յուսոյ պէս դեղեցիկ էր մեր սէրը, անհուն ու յարաւեւ՝ անսահման ապագայի մը չափ , անբիծ՝

անմեղութեան պէս . . . բայց , ով դառնութեանս , իւր մահը աչուքներուս արցունքը ցամքեցուց . . . բայց գուն , մի մեղադրեր իմ ցաւս . տես իմ հաւատարմութիւնս . ճանչցիր իմ սիրտս , եւ մոռնալով այդ հաղարտ գոռողութիւնդ , արժանացիր , թէ որ կրնաս , այս հաւատարիմ սրտիս :

## ՏԵՍԻԼ Զ.

## ԿՈՒՍՄԱՆ

Զարմանալի գոռողութիւն . բայց միթէ աղջկան ոը յաղթելը աւելի դժուարին է քան թէ բոլոր Ամերիկոյ . բնութիւնը՝ զինքը այնչափ գեղեցիկ ըստեղծելով՝ վայրենի սիրտ մը տուեր է իրեն . Հոս , բաց յայդ աղջկէն , ամենքը կը հնաղանդին ինձի . սակայն կուսման կրնայ այդ ապստամբ ճակատն ալ խոնարհեցնել . Երթանք պատրաստենք հարսանեացըս հանդէսը . թող չըսէ աշխարհք թէ կուսման չի կրցաւ աղջկան մը յաղթել :

ՎԵՐՋ ԱՌԱՋԻՆ ՀԱՆԴԻՍԻ

# ՀԱՆԴԻՍ ԵՐԿՐՈՐԴ

ՏԵՍԻԼ Ա.

ԶԱՄՈՐ, ԱՄԵՐԻԿԱՑԻՔ

ԶԱՄՈՐ

Թշուառ բաղդիս քաջ լնկերներ , ինչուան Երբ  
անվլրէժ մնանք , ինչուան Երբ մահուան սպասենք .  
միունինք առանց Ալզիրն աղատելու . ապրինք ա-  
ռանց Հայրենիքն փրկելու . դեռ չենք վութար կուս-  
մանի ատելի կենաց թելերը հնձել . անպատճի պի-  
տի մնայ ուրեմն այդ ժպիրն յաղթանակը : Ո՞վ իմ  
նախահարցո անզօր եւ ունայն աստուածներ , թշնա-  
մի աստուածոց մատնեցիք զմեղ . վեց հարիւր Սպա-  
նիացի , իմ երկիրս ու գահո ձեր տաճարները , զձեղ  
նաեւ ոչնչացուցին . ալ չկայ ձեղի զոհ , խորան ,  
տաճար , եւ ոչ ինծի , տէրութիւն , թագ ու սիրելի .  
ամեն բան կորուսի ես : Ա՞հ , անապատից տաք ա-  
ւագներուն մէջ , մութ անտառներուն խորերը ծած-  
կեցի ես ամօթս , ցաւերս ու սրտմտութեանս կայ-  
ծակները . երեք տարի արեւը իմ արտասուացս ու  
թշուառութեանս օրերը լուսաւորեց . ու երբ հիմայ  
զձեղ ինծի բարեկամ դանալով , վրէժինողրութիւնս  
ու սէրս յագեցնելու համար , զօրաւոր խմբի մը գը-  
լուխ անցած՝ միայն քանի մը քաջերով քաղքիս  
պարսպացը կը մօտենամ՝ իբրեւ գերի կը բռնեն ըզ

մեղ ու շղթաներու զարկած մութ բանտերու մէջ կը նետեն : Չեմ գիտեր ինչ դիտմամբ քակեցին հիմայ մեր շղթաները . ինչ պիտի ըլլայ մեր վիճակը . ահ , ուր ենք , բարեկամք , ով կրնայ ըսել ինծի . ով է տեղւոյս իշխանը . ուր է Ալզիր . արդեօք գերի է Մոնղէղ եթէ մեռած . ահ , թշուառ Զամորին սիրելի եւ տիտուր բարեկամք , չք կրնար մտացա տարակուսանքը փարատել :

## ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԸ

Քեզի պէս զմեղ ալ երկաթի զարնելով բանտարկեցին հոս , Տէր , երկրիս ու պալատիս մէջ օտարական , ժողովրդեան անծանօթ չկրցանք բան մը խնանալ . բայց , թշուառ Զամոր , եթէ բռնաւորք քու մահդ վճռեր են , բարեկամներդ պատրաստ են քեզի հետ մեռնելու :

## ԶԱՄՈՐ

Յաղթութեան դամիսիներով պսակուելէն ետքը , մահը՝ անշուշտ փառաւոր ու երջանիկ մահ է . բայց անարդանաց ու փատութեան մէջ մեռնել , Հայրենիքը շղթաներու մէջ ձգելով մեռնել , առանց իւր վրէժն առնելու՝ բռնաւոր դաւաճանաց ձեռքէն մեռնել , սիրելի հայրենակիցքս իմ ետեւէս գերեզման քաշկըստել , իմ հոգւոյս հատորը բռնաւորաց ձեռքը թողուլ , Ալզիրն անոնց կատաղութեանը յանձնել , ահ , այդ մահը սարսափելի մահ է . . . Ալզիր , ահ կոյադ անձկակարօտ , ինչ եղար , մեռմք արդեօք թէ կենդանի ես . եւ զուք , ուր էք , աստուածք հզօրք , ինչու իմ դրկէս կողոպտեցիք

այդ աղջիկը . այդպէս ուրեմն ձեր գթութեանը ,  
ձեր մէկ անուշ ակնարկութեանը արժանի չէր այդ  
անբիծ կոյսը . . . :

## ՏԵՍԻԼ Բ .

ԱԼՎԱՐԵ, ԶԱՄՈՐ, ԱՄԵՐԻԿԱՑԻՔ

## ԱԼՎԱՐԵ

Աղաս էք , ապրեցէք :

ԶԱՄՈՐ

Երկինք , ինչ կը լսեմ , անխմանալի զարմանք .  
Աստուած մի ես դու , եթէ ձեր մահկանացու մը .  
դուն սպանիացի կերեւաս , եւ ինչպէս կրնաս նեւ  
րել . թագաւոր ես եւ կամդռն ես տեղւոյս իշխանը :

## ԱԼՎԱՐԵ

Ոչ . բայց կրնամ անմեղութիւնը պաշտպանել :

ԶԱՄՈՐ

Ո՛վ վսեմ ձերունիդ , ինչ բանի կարող ես :

## ԱԼՎԱՐԵ

Թշուառ մահկանացուաց օգնելու :

ԶԱՄՈՐ

Ե՞ն , ո՞վ ազնիւ սրտիդ կազդէ այդ դութը ,

## ԱԼՎԱՐԵ

Իմ Աստուածո , կրօնքս ու երախտագիտութիւնը ,

## ԶԱՄՈՐ

Քու Աստուածդ, կրօնքդ, բնչ, այն անգութիւնսուրն առաւորները՝ արեան ծարաւի հրեշներ՝ որ բնաջինջը իմ ազգս, կործանեցին հայրենիքս, միթէ քու Աստուածդ չեն պաշտեր :

## ԱԼՎԱՐԵ

Մի եւ նոյն Աստուածը կը պաշտեն, բայց կառնարդեն զինքը . անիրաւութիւն եւ ոճիրը իսրենց օրէնք առեր են . բայց ես չմոռցայ առ քու ազգդ ունեցած երախտագիտութեանս պարտքը . կը յիշես այն սոսկալի պատերազմը ուր Սպանիացի սուրբ ցրուեց ու լաբեց քու ազգդ . այն կոստրածոց ու շփոթութեան մէջ՝ ձեզմէ մէկը իմ անձիս տէր ըլլալով խնայեց իմ ալեւոր հասակիս . սիրատը՝ այն վայրկեանէն 'ի վեր՝ կը հեծէ ձեր թշուառութեանը վրայ . անկից 'ի վեր քու ազգդ ինձի հայրենակից եղբայր ընտրեցի . ո՞հ, բնչպէս երջանիկ սիտի ըլլայի թէ որ կարենայի գտնալ այն անձանոթ դիւցազունը :

## ԶԱՄՈՐ

(Մեկուսի) Այդ գէմքը, այդ հասակն ու առաքիւնութիւնը, անշուշտ ինքն է, նոյն ինքն Ալվարէ, (Ալվարէին) կրնաս մեր մէջէն ճանչնալ քու կենացգ աղատարարը :

## ԱԼՎԱՐԵ

Ե՞նչ կը խօսիս . մօտեցիր, Երկիրնք, ով նախախնամ Աստուած, դուն ես իմ ազատիչս . ո՞հ, տկար աչուըներս չկրցան ճանչնալ զքեզ . (կը գրէէ) որդեակ

իմ, բարերար իմ, խօսի՛, ինչ կը ինդրես .ոչ, աղ չիմ թողուր գքեղ, մի բաժնուիր ինծմշ, հայր ըլլալ քեզի . Երկինք երկայն տարիներ չնորհեցին ինծի, որպէս զի կարենամիմ երախտագիտութեանս պարտ քըն հասուցանել :

## ԶԱՄՈՐ

Հայր իմ, եթէ քու անգութ աղդդ այդ առաքինութեանդ մէկ կայծը միայն ունենար, ո՞հ, հաւատան ինծի, այնչափ անսպարտ արեանց հեղեղներ չեն ներկեր մեր հայրենի դաշտերը . եւ որչափ բարերար, մաքուր ու վսեմ է քու հոգիդ այնչափ ալ անոնց անգութութիւնը զբնութիւնը կը սարսափեցը նէ, եւ ես՝ մահն առելի կընտրեմ քան թէ անոնց հետ ասպիլ: Բայց այս միայն կը ինդրեմ քեզմէ . ըսէ ինծի, ով ծերտնիդ, միթէ կենդանի է Մօնդէզ . միթէ Ալզիր . . . ո՞հ, կը տեմնաս այս արցունքները դոր իւր անուշ ջիշտակը թափել կուտայ :

## ԱԼՎԱՐԵ

Որդեակ իմ, մի ծածկեր ինծմշ քու արցունքները . զիացիր որ Մօնդէզ բարեկամդ լի կենօք եւ արդեամբ հու իմ քում երջամիկ կեանք մը կը պարէ :

## ԶԱՄՈՐ

Պիտի տեմնամ դինքը :

## ԱԼՎԱՐԵ

Ա, յու:

## ԶԱՄՈՐ

Ա՛զ ուրախութիւն:

## ԱԼՎԱՐԵ

Կուղեմ՝ որ իր բերնէն լաւս խոր երանելի վիճակը . Սիրոյ երջանիկ կապեր՝ իմ ժողովուրդու քու հայրենակցացդ ալիտի միացընեն : Երթամիմացընեմ քու գալուստդ Մոնղէզի եւ իմ որդւոյս . կը հեռանամ հիմայ քեզմէ , բայց զմեզ միացընող կապերը աւելի ամուր հաստատելու համար :

## ՏԵՍԻԼ Գ.

ԶԱՄՈՐ , ԱՄԵՐԻԿԱՑԻՔ

## ԶԱՄՈՐ

Վերջապէս երկնից բարութեան ճառագայթները կը ծագին վրաս . այս , բարբարոս երկրիս մէջ մէկ արդար մարդ մը միայն գտայ ես . Ասառւած մըն է այդ մարդը որ անօրինաց քար սրտերը կակուղցընելու համար իջաւ երկնքէն : Որդի մը ունի Ալվարէ , ան , այդ որդին իմ եղբայրս ալիտի ըլլայ թէ որ արժանի է այդպիսի հօր մը . ով երջանիկ առուր . ով իմ դառնացեալ սրտիս յոյս անուշակ , Ալզիր , պիտի տեսնամ զքեզ , երեք տարուընէ ետքը պիտի զրկեմ զքեզ գարձեալ . . . բայց , ինչ կը խօսիմ . զեռ հաւատաբիս ես Զամորի . թշուառ սիրտ մը չկրնարանկանկած ըլլալ . . . բայց ովէ այդ ծերունին որ հոս կը մօտենայ :

## ՏԵՍԻԼ Դ.

ԶԱՄՈՐ , ՄՈՆԴԻԶ , ԱՄԵՐԻԿԱՑԻՔ

## ԶԱՄՈՐ

Մոնդէզ , դժուն ես , Մոնդէզ , դու իմ գիրկս ես .  
տես՝ քու Զամորդ որ մահուընէ աղատեցաւ , որ  
գերեզմանէն 'ի լոյս ծնաւ զքեզ պաշտպանելու հա-  
մար . տես քու բարեկամդ , քու մտերխմդ ու վե-  
սայդ . հնու է Ալզիր . խօսէ , խօսք մը միայն , կեանք  
կտոմ մահ :

## ՄՈՆԴԻԶ

Մահուանդ ձայնը լաելով , ջերմ արցունքներով  
թրջեցինք գերեզմանիդ ցուրտ քարը . բայց երա-  
նի , խարուեր ենք , դու կենդանի ես , չորհեն քեզ  
երկինք երկայն տարիներ , եւ մեզի՝ վերջ այսչափ  
թշուառութեանց : Զամոր , մն , բնչ մտքով եկար  
դուն հոս :

## ԶԱՄՈՐ

Իմ , քու , աղջկանդ ու աստուածոցս վրէժն առ-  
նելու համար :

## ՄՈՆԴԻԶ

Ի՞նչ կը խօսիս :

## ԶԱՄՈՐ

Ծանօթ է քեզի մարտին այն ահաւոր օրը ուր  
անհաշտ Սպանիացի մը կործանեց իմ քաղքիս պա-  
րիսպները . կուսման էր իւր անունը . բաղդը իւր  
անունը եւ ոճիրները միայն սորվեցուց ինծի . այդ  
անունը՝ պատերազմի նշանն էր . իւր անունովը քու

աղջիկդ կորդեցին դրկէս, ընտանիքդ դերի վարեցին, կործանեցին տաճարները, քանդեցին խորանները ուր աստուածք զիս քու փեսայդ պիտի կոչէին, զիս ալ իւր դիմացը քաշկռաեցին. գիտես ինչ զարհուրելի տանջանաց դատապարտեց զիս անօրէնը, ու մեռած կարծելով կիսամեռ թողուցին զիս հոն. բայց բաղդը չուզեց իմ մահս. ժամանակը չկրցաւ ջնջել սրտիս ատելութիւնը, ու երեք տարուընէ ետքը՝ իմ քաջերս ժողուելով եկայ իմ հայրեննեացս վրէժն առնել կամ իւր փլատակաց տակը թագուիլ :

### ՄՈՒԴԵԶ

Թշուամու պատանի, զիտես թէ ինչպիտի վտանգի մէջ կը ձգես կեանքդ. մահը խնայեց քու ծաղիկ հասակիդ ու դոն մահդ կը խնզրես հոս. ինչ կրնան ընել քու բարեկամներդ այդ դիւրաբեկ զէնքերով գոռող հսկայից, աշխարհիս յաղթականներուն զօրութեանը դէմ. անոնց ձեռքէն թուած կայծակը մոխիր կը դարձնէ զձեղ ու ձեր քաղաքները. ան, Զամոր խոնարհեցաւ աշխարհք, դուն ալ խոնարհէ :

### ԶԱՄՈՐ

Ի՞նչ, Բս, խոնարհիլ, սողմլ մինչդեռ կենդանի եմ. ան, Մոնղէզ, հաւատաւ ինծի, այդ կայծակները կարհամարհեմ ես. անոնց յաղթելու համար բաւական է անվեհեր սիրտ մը. վատութիւնը ատելի է ինծի. իրաւ, չունինք զէնք, սուր մը միայն, բայց երկինք փոխանակ զինուց առաքինութիւն ար-

ւին մեղի . վերջապէս Ալզիրի համար կը պատերազմիմ , իրմով պիտի յաղթեմ :

### ՄՈՆԴԻԶ

Դադրեցնուր բարկութիւնդ , Զամոր . Երկինք հակառակ են քու կամացդ . ժամանակս փոխուած է :

### ԶԱՄՈՐ

Ի՞նչ ըսել կուզես . ժամանակս կրնայ փոխուիլ թէ որ քու սիրոտ փոխուած չէ , թէ որ իւր խօստամանը հաւատարիմ է աղջիկդ , թէ որ զիս կը յիշէ . . . աչուըներդ կը դարձնես , կուլաս , կը հառաշես . . . :

### ՄՈՆԴԻԶ

Թշուամոր Զամոր :

### ԶԱՄՈՐ

Միթէ քու որդիդ չեմ ես + ան , բռնաւորք ապականներ են քու վսեմ հոգիդ . դերեզմանիդ եղերքը անիրաւութիւն եւ ոճիր սորվեցուցին քեզի :

### ՄՈՆԴԻԶ

Յանցաւոր չեմ ես , եւ ոչ այդ աշխարհակալները՝ բռնաւորք . Աստուած իրենց առաջնորդեց հոս . իրենցմէ սորվեցանք նոր առաքինութիւններ , անման գաղտնիք ու երջանիկ ըլլալու ճամբան :

### ԶԱՄՈՐ

Ի՞նչ կը խօսիս . սարսափելի խոստովանութիւն . Ալզիր բռնաւորաց գերի եղեր է եւ դուն կը գովես զանոնք :

### ՄՈՆԴԻԶ

Գերի չէ Ալզիր :

## ԶԱՄՈՐ

Ա՛ն, Մոնղէղ, ավ Հայր իմ, ներէ ուրեմն իմ թշուառութեանս, ներէ իմ բարկութեանս . մտածէ որ իմս է այդ աղջիկը . այն, դուն ինծի խոստացար անմահ աստուածոց դիմացը . երկինք ընդունեցան այդ խոստմունքդ :

## ՄՈՆԴԵԶ

Մի քու աստուածներդ վկայ կոչեր . չեմ ճանչնար ես այդ ցնորից ծնունդքը . իմ պաշտած Աստուծոյս զօրութեանը դիմաց ոչինչ են քու աստուածներդ :

## ԶԱՄՈՐ

Ի՞նչ, կրօ՞նքդ, մեր նախահարց օրէնքները . . . ,

## ՄՈՆԴԵԶ

Ճանչցայ անոնց ունայնութիւնը . փարատեցաւ մտացածուշը . մւր էր թէ իմ Աստուածս լուսաւորէր հոգիդ, ճանչնայիր մեր առաքինութիւնը :

## ԶԱՄՈՐ

Ի՞նչ առաքինութիւն, Աստուծոյ անծանօթ անոգութ, բռնաւորաց գերի, մոռցար քու աստուածներդ . մն, դուն ուրացար զանոնք խոստմունքդ ուրանալու համար . բայց խօսէ, ուրացմաւ Ալզիր :

## ՄՈՆԴԵԶ

Թող դիս . հանդարս է խղճմտանքս . կօրհնենիք բաղդս, բայց զքեզ կողբամ :

## ԶԱՄՈՐ

Եթէ ուրացար կրօնքդ, լաց, ողբամ քու վրադ . բայց գոնէ դիմա սրտիս տանջանացը որ սիրոյ եւ

վրէ ժխնդրութեան կրակներով բորբոքեալ կը մաշի .  
ուր է կուսման իմ ոխերիմ թշնամիս . ուր է Աշ-  
զիր . եկու Մոնղէզ , տար զիս աղջկանդ քով՝ մի-  
անգամ տեսնամ զինքը ու մեռնիմ . Մոնղէզ , կը նա-  
խանձիս զինքը տեսնալու երջանկութեանս վրայ .  
բայց դողա Զամօրի յուսահատութենէն :

---

### ՏԵՍԻԼ Ե .

ԶԱՄՈՐ , ՄՈՆԴԻԶ , ԱՄԵՐԻԿԱՑԻՔ , ԶՈՐԱԿԱՆ ՄՅ

---

### ԶՕՐԱԿԱՆ

(Առ. Մոնղէզ) Փութամ , Տէր , Ժողովուրդը տաճարին  
մէջ գումարուած քեզի կապասէ հանդիսին կատար-  
մանը համար :

### ՄՈՆԴԻԶ

Հմալա երթանք :

### ԶԱՄՈՐ

Ջէ , ով անգութ . պիտի չհեռանաս ինձմէ . ինչ  
հանդէս :

### ՄՈՆԴԻԶ

Մնաս բարով . հաւատու ինձի Զամօր , փախիր  
այս պալատէս :

### ԶԱՄՈՐ

Քեզի հետ պիտի գամ ուր որ երթաս :

### ՄՈՆԴԻԶ

Կերէ ի՞մ հայրական խնամոցս . զօրականք , մի  
թողուք զինքը քրիստոնէից տաճարը , այս է կուս-  
մանին հրամանը : (Զօրականք կարգիլեն Զամօրը):

## ՏԵՍԻԼ Զ.

ԶԱՄՈՐ , ԱՄԵՐԻԿԱՅԻՔ , ԶՈՐԱԿԱՆՔ

## ԶԱՄՈՐ

Կուսաման . Բնչ կը լսեմ . մատնութիւն . ով կատաղութեանս . ով եղեռն , վաստ անարդանք . կուսաման իւր տէրն է . ալ չմնաց ուրեմն առաքինութիւն երկրիս վրայ . Ալզիր . Ալզիրն ալ յանցաւոր , ինքն ալ ծծեց անօրինաց ատելի թոյնը . . . կուսաման հնս է , ահ , բնչ ընեմ :

## ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԸ

Տէր , իմ խորհուրդս կրնայ մեզի օդակալար ըլլար . զմեղ ազատող առաքինի ծերունին հիմայ իւր որդւոյն հետ հոս պիտի դայ . ինողը իրմէ որ զմեղ քաղքէս դուրս հանէ . երթանք , միանանք մեր քաջերուն ու չարեացապարտ գլխոց վրայ դարձնենք լարող բոցը ու մեր վրէժինդրութեան սուրերը . հարուած մը միայն կուսամանի կուրծքին վրայ , թող տեսնայ . իւր օրհասական տագնապին մէջ՝ սպանիացի դիականց բազմութիւնը ու փչէ հոգին , բայց միայն , Տէր , Ալվարէի եւ իւր որդւոյն ինայենք :

## ԶԱՄՈՐ

Թշուառ ընկերք , ուր էր թէ կուսամանի արիւնը կարենայինք զոհել 'ի վրէժ հայրենեաց . ով անողոքելիդ վրէժինդրութիւն , զինէ մեր ձեռքերը . մնոցի , մեռցի , կուսաման . . . բայց աւաղ , պատռհասել կուզենք եւ դերի ենք . . . բաղդին սարսափե-

լի ձեռքը կը ծանրանայ ճակտիս վրայ . Ալվարէ հեռացաւ . Մոնղէզ՝ կը մատնէ զմեղ . ( Չայն երգոց ) թերեւս իմ սիրելիս անօրինաց ձեռքն ինկած է . . . բայց ինչ ցնծութեան ճայներ կը զարնեն իմ ականջը . . . լուսամիխւո ջահեր կը վառին . . . կը լո՞ք ուրախութեան երգոց խորհրդաւոր աղաղակները . . . ինչ ուրախութիւն ինչ ոճեր . . . ոհ , բարեկամք , սարսափելի գուշակութիւն մը . . . չըլլայ թէ . . . Ալզիր . . . հապա երթանք , փրկութիւն եւ կամ մահ :

ՎԵՐԶ ԵՐԿՐՈՒԴԻ ՀԱՆԴԻՍԻ



# ՀԱՆԴԵՍ ԵՐՐՈՐԴ

ՏԵՍԻԼ Ե.

ԱԼԶԻՐ

Ո՞վ իմ քաղցր սիրելւոյս երկնարնակ ոգիդ , վեր-  
ջապէս ուրացայ զքեղ , լմնցաւ . կուսմանն է իմ տ-  
մուսինս . ալ իրենն եմ , ով դառնութիւն . ուխտե-  
ցինք , երդուբնցանք , եւ մեր երդմունքը գրուեցան  
երկնից անջնջելի մատենին մէջ : Ո՞վ դու , ուրուա-  
կանդ արիւնաթաթախ , սիրելիդ իմ Զամոր , եթէ  
կրնան իմ հառաչանքներս , արտասուքս ու խղճիս  
խայթերը թափանցել գերեզմանիդ ցուրտ քարը ,  
թէ որ կապրի դեռ այդ հաւատարիմու փափուկ սիր-  
ուրդ , այդ անուշ հոգիդ որ ինչուան վերջի շունչը  
սիրեց զիս , ներէ իմ բռնի հարսանեացս . պէտք էի  
ձօրս կամացը հնազանդիլ , ինքզինքս թշուառ հպա-  
տակացս երջանկութեանը զոհել , սրբել վազած ար-  
ցունքները , կենդանացնել զաշխարհս . . . բայց դուն  
չես յաշխարհի . Զամոր սիրելիդ իմ , հանգիստ թող  
այս դառնացեալ հոգիս որ կը նուազի ցաւոցս բըս-  
նութենէն , սպառեցան արտասուքս , զքեղ ողբա-  
լով մարեցաւ աչացս լոյսը . ո՞հ հիմայ այդ քուժիշա-  
տակդ , Զամոր , պատկեր մըն է սրտիս սիրաբնակ  
ծալքերուն մէջ պահուած , կաթիլ մը ցամքած ար-  
ցունք նուազեալ աչուբներուս մէջ :

ՏԵՍԻԼ Բ.

ԱԼԶԻՐ, ՇԵՖԱՆ

ԱԼԶԻՐ

Շէֆան, աղաստ են գերիները . բնչու չէք վուա  
թար հոս իմ դիմաց բերել զանոնք . վերջապէս չեմ  
կրնար տեմնալ իմ հայրենակիցքս ու լալ անոնց հետ :

ՇԵՖԱՆ

Ա՛հ, Տիկին, զգուշանանք կուսմանի կատաղուաթենէ . մեր կամ գերիներուն կեանքը վտանգի մէջէ . ամեն տեղ զինուց ձայներ կը լսուին . կուսման պատերազմի գրօշն բացած՝ աշխարհիս կործանումն կսպառնայ . խեղճ գերիներ, ահ ու սարսափ պատեր է դիրենք :

ԱԼԶԻՐ

Խարեցիք զիս ուրեմն, ով Երկինք, հաղիւ թէ կուսման թողուց իմ ձեռքս, հաղիւ հեռացաւ խորանէն ու մահ եւ սատակում կսպառնայ իմիններուս դէմ . ոհ, կենացս թշուառութեանը երդուընցայ ես ուրեմն :



ՏԵՍԻԼ Գ.

ԱԼԶԻՐ, ՇԵՖԱՆ, ՄԵՏՈՐ

ՄԵՏՈՐ

Գերիներէն մէկը, Տիկին, քու դիմացդներ կայսնալ կը իմորք :

## ԱԼԶԻՐ


Թող գայ . իւր եւր բարեկամացը վրայ կը դորովի սիրտս , սիրելի են ինծի . բայց ինչու մէկը միայն կուղէ դիս տեսնալ :

## ՍԵՏՈՐ

Գաղանիք մը ունի կըսէ , զոր միայն քեզի կուզզէ յայտնել . եւ կըսեն թէ քու ամումնոյդ կուսամանի Հօրը կեանքը աղատողն է . իւր ճակտին վրայ ցաւք եւ տառապանք խոր հետքեր դրօշմեր են . երբ քու անունդ լիէ , աչուլները արցունքովկը լեցուին . դքեզ թշուառ կը կոչէ , անշուշտ չգիտէր քու վառքդ :

## ԱԼԶԻՐ

Ի՞նչ վառք . ո՞հ , թերեւս իմարիւնս է այդ թշուառ գերին . թերեւս կը ճանչնայ Զամորը . ով գառն յիշատակ . սիրտս պիտի խոցէ դարձեալ . պիտի բանայ հոգւոյս վէրքերը . բայց հոգ չէ . թող գայ (Կերթայ Սէտար) դաղտնի զգացում մը կը պաշարէ դիս . աւազ , դեռ այս պալատիս մէջ վայրկեանս մը չանցուցի առանց արցունք թափելու :



## ՏԵՍԻԼ Դ.

ԱԼԶԻՐ , ԶԱՄՈՐ , ՇԷՖԱՆ

## ԶԱՄՈՐ

ԱԼՂԻՐ , դժւն ես ԱԼՂԻՐ :

## ԱԼԶԻՐ

Նրկինք, այդ դէմքը, այդ ձայնը . . . Զամնը . . . կը մեռնիմ . (Շէֆանի գերկը կեյնաց) :

## ԶԱՄՈՐ

(Ոտուբներուն իշնալով) Ճանչցիր քու սիրելիդ :

## ԱԼԶԻՐ

(Տկար ձայնով) Զամուր իմոտուբներմւս . . . կը խարուիմ արդեօք :

## ԶԱՄՈՐ

Ո՛չ, չես խարուիր . քեզի համար կապրիմ ես . ահա քու ոտուբներուդ ինկած կը յիշեցընեմ քեզի երդումդ ու խոստմունքներդ : Ո՛վ իմ անձիս հատոր, ջերմ սիրոյս միակ Ատուած, մոռցար արդեօք զմեզ միացնող սուրբ սիրոյն կապերը :

## ԱԼԶԻՐ

Ո՛վ թունալից եւ անուշ վայրկեան, ցաւոց եւ ցնծութեան սիրելի եւ աղէտալի վայրկեան, ով իմ որտիս սէր ցանկալի, Զամնը, ո՞ր ատեն կը տեսնամ զքեզ . ամեն մէկ նայուածքդ մէյմէկ հարուած կաղղեն որտիս :

## ԶԱՄՈՐ

(Ելլալով) Կը հառաջնս զիս տեսնալով :

## ԱԼԶԻՐ

Շատ ուշ տեսայ դքեզ :

## ԶԱՄՈՐ

Գլուխմ որ մահուանս աղետարեր ձայնը լեցուց աշխարհքս. Թշուառութեան մէջ, հեռու քեզմէ, դա-

ուն օրեր անցուցի ես . բարբարոսք յափշտակեցին  
զքեղ իմ զրկէս , կործանեցին դահա , ոչնչացուցին  
իմ հայրենի աստուածներս . գիտես որ Կուսման ,  
այդ վայրագ դադանը , սոսկալի տանջանքներով զիս  
մեռցնել հնարեցաւ . գիտես որ քու տարփածուդ ,  
քու փեսայդ , սիրելին իմ Ալզիր , դահճաց ձեռքը  
մասնուեցաւ . կը սոսկան , գուն ալ կզգասիմսըրա-  
մտութեանս բոցերը . անհաշտ վրէժինդրութիւն մը  
սրտիս ծալքերուն մէջ կը մնանի դեռ . եւ ան-  
տարակոյս Աստուած մը , սիրոյ Աստուած մը փրկեց  
զիս մահուընէ : Խօսէ , Ալզիր , հօս է Կուսման , ըզ  
քեղ այդ դադանին ժանիքներէն յափշտակելու հա-  
մար եկաց ես . գու կը սիրես զիս . ուրեմն , սարսա-  
փելի վրէժինդրութիւն մը . . . :

## ԱԼԶԻՐ

Այս , առ վրէժդ , պատուհասէ ոճիրը . զարկ .

## ԶԱՄՈՐ

Ո՛Վ Դիք . խոստմունքդ , երդմունքդ . . . :

## ԱԼԶԻՐ

Զարկ , անարժան եմ կենաց ու սիրոյդ :

## ԶԱՄՈՐ

ԱՇ , Մոնդէզ , այ անդութ . սիրաս չկրցաւ հաւ-  
տալ :

## ԱԼԶԻՐ

Ծանօթ է քեզի արդէն իմ ոճիրներս . . . հիմայ ,  
վայրկեան մը առաջ . . . ոհ , գիտես , Զամոր , որմւ  
համար թողուցի զքեղ :

ԶԱՄՈՐ

ԶԵ , բայց լոսէ :

ԱԼԶԻՐ

ԶԵԺ կրնար :

ԶԱՄՈՐ

ԱԼՂԲՇ :

ԱԼԶԻՐ

ԿՈՒՍԱՄԱՆ . . .

ԶԱՄՈՐ

Ի՞՞նչ . . .

ԱԼԶԻՐ

ՄԵՐ սիրոյն սոսկալի հարուածը . . .

ԶԱՄՈՐ

Ետքը :

ԱԼԶԻՐ

Խմ ամուսինս է :

ԶԱՄՈՐ

Դժնիվք :

ԱԼԶԻՐ

Հայրս , Ալվարէ , խաբեցին զիս . ինչուան քրիստոնէից տաճարը քաշկռաւեցին զիս . հոն , մեղապարագ սիրելւոյդ շրթունքէն թռաւ , անօրէն երդում մը թռաւ . . . ամեն բան ուրացայ ես , աստուածներս , հայրենիքս , սիրելիս , ոհ , յանուն երիցս (ստքը իշնաւով) առ խմ կեանքս ահա խմ սիրսս , զարկ :

ԶԱՄՈՐ

Ալղիր , ճշմարիտ է , կուսաման քու ամուսինդ :

ԱԼԶԻՐ

Ո՞հ , հայրական իշխանութիւնը բռնի ստիպեց զիս .

մահուանդ ձայնը , անկոր աղետիցս տառապանքը ,  
սրտիաղու յուղմունքը , երեք տարուան զերելմա-  
նիդ յուր քարին վրայ թափած արցունքներս , ըզ  
քեղ կորանց նելուս ցաւոյն բոնութիւնը , յուսա-  
հառ եւ անսմխիթար , քրիստոնէից ձեռքը գերի ին-  
կոծ , վրչաղաղէս իրենց Աստուածը պաշտել տուին  
ինձի , եւ ատեցի ես քու աստուածներդ որ չկրցան  
վրկել զքեղ . բայց սերը զատապարտեց զիս , չիմ  
ուզեր արդարանալ . կենդանի ես զուն , բաւական  
է . չկրցայ ես պահել խոստմունքս , ես միայն մեռ  
դաւոր եմ , յանուն սիրոյդ , կը խնդրեմ Զամոր , առ  
վերցներ ինծմէ այս ատելի կեանքս որ ալ քեզի հա-  
մար չէ :

## ԶԱՄՈՐ

Ո՛չ , մեղաւոր չես զուն , ելիր ոտք . բայց առ իս  
ունեցած սիրոյդ բոցը դեռ եւս կը վառի սրտիդ  
մէջ :

## ԱԼԶԻՐ

Երբ Մոնդէզ , Ալվարէ , թերեւու վրէժխնդիր Աստ-  
ուած մը , քրիստոնեայք , իմտկարութիւնս , ամենքը  
միացած , զիս տաճարը տարին , ապահով քու մա-  
հուանդ վրայ , սրտիս մէջ , զքեղ , քու միշտակդ  
պաշտելով ձեռքս կուսմանին տուի : - Ժողովուրդք  
եւ բռնաւորք , երկինք եւ երկիր , կուսման նաևւ  
խմացաւ որ զքեղ կը սիրեմ ես . եւ այս սարսափե-  
լի վայրկեանս ուր կը տեմնամ զքեղ , վերջին ան-  
գամ մ'ալ ըսեմ թէ զքեղ սիրեցի ես .

## ԶԱՄՈՐ

Վերջին անգամմ կը տեսնայ զքեղ Զամոր . հա-  
յ

զիւ թէ գտայ զքեղ ու կորսնցնեմ դարձեալ . մհ ,  
թէ որ մեր սէրը դեռ կը խօսի սրտիդ . . . .

## ԱԼԶԻՐ

Լուս . կուսման , Ալվարէ , ուլ երկինք :

## ՏԵՍԻԼ Ե.

ԱԼԶԻՐ , ԶԱՄՈՐ , ԱԼՎԱՐԷ , ԿՈՒՍՄԱՆ , ԵԿՑԱՆ

## ԱԼՎԱՐԷ

(Որդւոյն) Տե՛ս , իմ կենացս աղատարարը , որդեակ .  
Իլ դու , ոգիդ վեհազուն , դուն որուն պարտըկան  
եմ իմ օրերս , եկմւր գրկեմ զքեղ . եկմւր , վայելէ  
իմ հայրական սէրս կուսման որդւոյս հետ :

## ԶԱՄՈՐ

Ի՞նչ կը լսեմ . անիկայ , կուսման . անիկայ , քու  
որդիդ , այդ գաղմնը :

## ԱԼԶԻՐ

Ո՞վ Աստուած , դժմա մեր վրայ :

## ԱԼՎԱՐԷ

Ի՞նչ զարմանք :

## ԶԱՄՈՐ

Ա՞հ , այդ անօրէնը այդպիսի առաքինի հօր մը  
որդիք :

## ԿՈՒՍՄԱՆ

Ստահակ գերի . ուսկից կուգայ քեղի այդ ժպիրէ  
յանդդնութիւնը . կը ճանչնամս զիս թէ ուլ եմ ես :

## ԶԱՄՈՐ

Հայրենիքացս սոսկումը . բայց դռւն ալ կը ճանչ-  
նան Զամորը :

## ԿՈՒՍՄԱՆ

Դ. Թ. Ե.

## Ա. Վ. Ա. Բ. Ե.

Զամորը :

## ԶԱՄՈՐ

Այս . ես , որուն կեանքը անլուր ու ամօթալի  
տանջանքով ուղեցիր վերցընել . ես , որուննայուած-  
քը միայն կրնայ դողացընել զքեղ . բաւական չէր  
տէրութեանս կորուստը , բաւական չէր դահիս կոր-  
ծանումը , ահ , մէկ հատիկ հարստութիւնս տլ կո-  
ղոպահեցիր դուն . առ (սուրը կուտայ) թափէ արիւնս ,  
վերջ տոր եղեռանցդ , առա թէ ոչ այս ձեռքս որ  
հօրդ կեանքը չնորհեց կրնայ իւր որդւոյն դարշելի  
արիւնը թափել :

## Ա. Վ. Ա. Բ. Ե.

Ո'վ նախատանացս . կրնան պատասխանել . . .

## ԿՈՒՍՄԱՆ

Պատասխանել ' այդ յանդուգն ամպստամբին ,  
այդ չափ նուաստանալ երբ անհրաժեշտ պատիժը կըս-  
պսաէ իրեն . իմ արդար ցասմանս կայծակն այդ չափ  
չէր ուշանար մեղապարտին գլուխը ջաղիսելու եթէ  
զքեղ չմեծարէի , հայր : Կրնան երեւակայել , Աղիքր ,  
թէ որչափ անարդեցիր զիս . պէտք էիր մոռնալ այդ  
ապստամբ գերին որուն համար դեռ արցունք կը  
թափես :

## ԱԼԶԻՔ

(Ո.ռ. Կուսման) Անդութ. (առ. Ալվարե) եւ դու Տէր, իմ  
բարերարս եւ հայր, (առ. Զամոր) դուն, իմսէրս եւ  
յոյսս, դուք երեքնիդ ալ, տեսէք իմ աղետիցս զառ-  
նութիւնը ու սոսկացէք. ահաւասիկ իմ սիրելիս զոր  
հայրս ինծի աժուսին ընտրեց գերութեան շղթանեւ-  
ը ընդունելէս ու հայրենեացս կործանումը տեսնեւ-  
լէս առաջ. իւր մահուաճը միայն փշրեցաւ նախա-  
հարցս արքունի դաւազանը եւ ալ ամեն բան փո-  
խուեցաւ մեզի համար. Հայրս ու նս, թշուառ եւ  
անօդնական, հայրենեացս անծանօթ Աստուած մը  
ճանչցանք. եւ ահա վկայ կոչեմ այդ քրիստոնէից  
Աստուածը որ իմ դժբաղդ հարսանեացս երդումն ըն-  
դունեցաւ, այդ Աստուածը որ զիսզրկեց իմսիրել-  
ւոյս զրկէն. իւր օրէնքներն անծանօթ են ինծի,  
բայց ես որտիս մէջ խօսող առաքինութեան ձայնին  
կը հաւատամ. Զամոր, սիրելի ես դուն ինծի, զքեզ  
սիրելն իմ սրտիս անուշ պարտքն էր, բայց յետիմ  
երդմանցս չեմ կրնար քուկդ ըլլալ. եւ ոչ քուկդ  
կուսման, յետ այնչափ եղեռանցդ, այսուհետեւ մոռ-  
ցիր զիս. արդ ձեր երկուքէն ոլ այսօր դահիճ պի-  
տի ըլլայ ինծի, ով պիտի խոցէ այս սիրտս որ չկըր-  
ցաւ իւր սիրելւոյն սէրը վայելել. թշուառ եւ մե-  
ղապարտ, երդմանաղանց առ Զամոր, անհաւատարիմ  
առ կուսման, ով երջանիկ մահուամը մը վերջ պիտի  
տայ իմ ոճիրներուս. քու ձեռուըներդ, կուսման,  
վարժած են արիւն թափելու. թափէ իմ արիւնս ալ-  
սիրոյ եւ հարսանեաց իրաւանցը վրէժխնդիր եղիր.

պատուհասէ յանցաւորս եւ մի անգամ արդար եղիք  
կենացդ մէջ :

## ԿՈՒՍՄԱՆ

Շատ է արդ . կը մտնամ իմ առ քեզ ունեցած  
ոէրս եւ ինձմէ գտած պատիւներդ , ու մահուանով  
կը փափաքիս . քաջ է , իմ նախանձորդիս մահն ըլ-  
լայ քեզի պատիժ . զօ՞րականք . . . .

ԱԼԶԻՐ

## ԱՆԳՈՒԺ :

## ԱԼՎԱՐԵ

Ի՞նչ կընես , որդեալ . յիշէ իւր բարիքները . ինչ-  
պիսի գառն տառապանաց մէջ կը թողուք դիո , ով  
նրելինք , մէկուն՝ ևս կեանք տուի , միւն՝ ինձի իմ  
կեանքս չնորհեց . ահ , սիրեցեալ որդիք , խնայեցէք  
իմ ալեւոր հասակիս :

## ՏԵՍԻԼ Զ.

ԱԼՎԱՐԵ , ԿՈՒՍՄԱՆ , ԶԱՄՈՐ , ԱԼԶԻՐ , ՄԻԴՐԱՆ

## ՄԻԴՐԱՆ

Փութա , Տէր , թշնամիք ծածկեր են դաշտեն  
երեսը ու մօտ են քաղքիս դոները խորտակելու :

## ԿՈՒՍՄԱՆ

Հապա երթանք . Կուսմանի նայուածքը միայն  
բառական է զիրենք մոխիր դարձնելու . թէ որ  
յաղթել չեն դիտեր , թող ծառայել սորվին :

ԶԱՄՈՐ

ՄԵՇՆՔ , ծառայթիլ :

ԿՈՒՍՄԱՆ

Զօրականք , չղթաներու զարկէք այդ վատ սարուն  
կը , տարէք դիմքը . . .

ԱԼԶԻՐ

Ո՞ւր կը տանիք :

ԿՈՒՍՄԱՆ

Բանա :

ԶԱՄՈՐ

Խաբերայ յոյս . . . եւ սա՛յայն ձեռուըներու աշատ  
պէտք էին ըլլալ , ան ատենը կիմանայիր թէ ինչպէս  
արժան է խօսիլ քեզի պէս գոռող վիրագի մը հետ :  
Արիւնս պիտի ծծես , զիտեմ . սակայն լաէ գուն Զաւ-  
մորը որ մեռնելէն առաջ դքեզ բոնաւոր կը կոչէ ,  
անօրէն բոնաւոր :

ԿՈՒՍՄԱՆ

Նախ ես սրով տամ պատասխան (սուը կը հանէ ,  
Ալվարէ կարդելէ)

ԱԼԶԻՐ

(Զամորին վեզը պլուելով) Եկուլը մեռնինք , մէկ մէ-  
կու գիրկը մեռնինք :

ԿՈՒՍՄԱՆ

Հեռացուցէք անօրէնը :

ԶԱՄՈՐ

(Երթալով) Արդարագատ ևն Երկինք :

ԱԼԶԻՐ

Զամոր , յետին ողջոյն մը :

## ԶԱՄՈՐ


Բղջոյն մահու : (Կերթայ զօրականներով) :

ԱԼՎԱՐԵ

Յիշէ , որդեակ , որ քու հօրդ կեանքը պարգե-  
ւեց :

## ԿՈՒՍՄԱՆ

Ջինուց շառաչմունքը կը մօտենան . ողջամբ  
մնա , յաղթելու ժամանակ է :



ՏԵՍԻԼ Է.

ԱԼՎԱՐԵ , ԱԼԶԻՐ

ԱԼԶԻՐ

Ահա քու ոտուըներուդ կիյնայ , ով Տէր , յուսա-  
հատ աղջիկ մը . ողորմէ իմ սիրելոյս , դթա ինծի ,  
եւ եթէ վեհանձն ես , ինչուան վերջը անփոփոխ  
մնացիր . իմ Զամորս պիտի մեռնի , հայր , ես եմ  
իւր մահուամնը պատճառ , դու միայն եղիելոյն հղօր  
ապաւէն մը կրնաս ըլլալ . ես եմ մեղապարտ , ես  
քու որդիդ անարգեցի . . . բայց ինչ ընեմ , սիրաս  
արդէն Զամորի ընծայած էի , իմս էր Զամոր , իմսէ-  
րըս է Զամոր , առաքինի է Զամոր , դուն ալ կեան-  
քըդ իրեն պարտական ես , դարձուր Զամորս իմսիրոյս ,  
իմ ամենաթշուառ սիրոյս :

ԱԼՎԱՐԵ

Ո՞հ , ելիր ոտք , Ալզիր . դուք իմ որդիքս էք :

հօր աչքով կը նայիմ ես ձեր վրայ . սիրտս կը գոռովի , բայց չեմ կրնար փրկել զքեղ ևթէ խոստամունք ու երդումք չպահես , Աղջիր . գիտեմ , անտպոյն , անողորմէ կուսման , բայդ իմ որդիս է , բայց քու ամուսինդ է ու կը սիրէ զքեղ :

## ԱԼԶԻՐ

Ա՞հ , ինչու Զամորին հայրը չես դուն :

ՎԵՐՋ ԵՐՐՈՐԴ ՀԱՆԴԻՍԻ



# ՀԱՆԴԵՍ ԶՈՐՅՈՒԹ

ՏԵՍԻԼ Ա.  
Ա.Վ.ԱՐԵ, ԿՈՒՍՄԱՆ

## ԱԼՎԱՐԵ

Յաղթեցիր, որդեակ, բայց մի յաղթութեանցդ  
ալսակն արիւնոտեր. փառաց երջանիկ թեւերուն վը-  
րայ բարձրացած մի մոռնար դթութիւնը : Ահա կեր-  
թամ ես կիսամեռ դիականց վէրքերն պատել, ու  
իրենց ցաւերն սվոփել, գուն ալ յիշէ որդեակ, որ  
քու հայրդ է քեզի աղաչողը . բարեգութ եւ քրիս-  
տոնեայ, ներէ Զամորին . ահ, պիտի չկարենամ բնա-  
ւորութեանդ խատութիւնը կակուզցընել . գիտցիր որ  
անուշութեամբ միայն կընաս յաղթել սրտից :

ԿՈՒՍՄԱՆ

Բայց գուն իմ կը վիրաւորես . առ իմ կեանքս  
բայց ազատ թող զիս իմ վրէժինդրութեանս մէջ .  
եւ բնչպէս ներեւմ Զամորի, Ալզիր կը սիրէ զինքը :

## Ա.Վ.ԱՐԵ

Աւելի ցաւալի է իւր վիճակը :

ԿՈՒՍՄԱՆ

Ցաւալի, անիկան, Հայր, ես ալ կուզեմ այդպի-  
սի ցաւալի վիճակ մը ունենալ :

## Ա.Վ.ԱՐԵ

Միթէ կը կասկածիս Ալզիրի առաքինութենէն .  
նախանձն . . . :

## ԿՈՒՍՄԱՆ

Այս , նախանձն . եւ չես կրնար մեղադրել այդ  
իրաւացի զգացումն . իմ օրինաւոր ամուսինս է Ալ-  
զիր , եւ սակայն Ալզիր Զամորը կը սիրէ , եւ դուն ,  
Հայր , դուն անտարբեր ես իմ ցաւոյս ու անարդա-  
նացս :

## ԱԼՎԱՐԵ

Այ այդչափ այլայլիր , որդեակ , հաւատան ին-  
ձի , առաքինի է Ալզիր , Քաղցրութեամբ կրնանք  
զինքը որսալ :

## ԿՈՒՍՄԱՆ

Քաղցրութիւն , Բս , իւր գեղեցկութիւնը շողո-  
մքն , իշխանութեանս աթոռէն ինչուան իւր ոստուը-  
ներուն խոնարհիմ , գգունմ զինքը , ու պատուայս ամօ-  
թըն աւելցընթմ . բայց գուն փոխանակ որդիդ պաշտ-  
պանելու կը մեղադրես զինքը . իմ անձիս պատիւն  
ու փառքը անարդեցի ես արդէն թագաղարմ աղ-  
ջրկանց տեղ գերի մը ինծի ամուսին ընտրելով որ  
կատէ զիս . բայց տես իմ թշուառ վիճակս , իւր ա-  
տելութեանը հետ կաճի իմ սերս :

## ԱԼՎԱՐԵ

Այ ցաւիր այդ օրինաւոր սիրոյդ վրայ , բայց չափ  
դիր կրիցք . թերեւս ճանչնայ Ալզիր իւր պարտքե-  
րը . իսկ թէ որ որոշած ես Զամորի կորուսոք , խոս-  
տացիր գոնէ չվճռել իւր մահը զիս տեսմալէդ առաջ :

## ԿՈՒՍՄԱՆ

Է՞՞ , ինչպէս որդի մը կարենայ մերժել իւր հօ-

ըը իմնդիրքը, քու սիրոյդ համար կուղեմ առ վայր  
մի լոեցընել բարկութիւնս բայց որին բան մի պա-  
հանջեր ինծմէ :

## ԱԼՎԱՐԵ

Ո՛չ, միայն քիչ մը ատեն . (Կերթայ) :

## ԿՈՒՍՄԱՆ

Ի՞նչ, լոեցընել բարկութիւնս, սիրել, զղջալ,  
նախանձիլ Զամորի երջանկութեանը վրայ եւ չկա-  
րենալ պատոհասել այդ ստղուկը . . . բայց զնկ կը  
տեսնամ . Ալզիր :

## ՏԵՍԻԼ Բ.

ԿՈՒՍՄԱՆ, ԱԼԶԻՐ. ՇԵՖԱՆ

## ԱԼԶԻՐ

Այն, ես եմ, քու ամուսինդ է որ չկրցաւ սի-  
րել զքեզ բայց մեծարեց քու անունդ . իմսէրս մի-  
այն մասնեց Զամորը, եւ թէ որ ինքը կորառի իմ  
անկեղծութիւնս է պատճառ, բայց գուն ալ աւելին  
մտիկ ըրէ . քու ամուսինդ կը յանդգնի իւր սիրելոյն  
ներումը քեզմէ իւր նախանձորդէն խնդրել . Կուս-  
ման թէպէտեւ գոռող, դաժան եւ սոսկալի, բայց  
մեծահոգի միանգամայն, վասն զի աշխարհակալ  
յաղթական մը յանցանաց ներելովն ալ կրնայ պար-  
ծիլ . դիտեմ որ թէթեւ բան չէ այս խնդիրքո բայց  
փառքը մեծ է, ու քեզի միայն արժանի . այսպիսի  
վսեմ առաքինութեամբ, թերեւս 'ի սէր փոխես իմ

ատելութիւնս : ահ , թէ որ թափուր սրտի մը մէջ  
առաքինութիւնը կրնայ . . . :

### ԿՈՒՍՄԱՆ

Թէ որ առաքինութիւնք այդպիսի զօրաւոր աղ-  
դեցութիւն կունենան քու հոգւոյդ վրայ , անոնց  
օրինացը հետեւելու համար լաւ ճանչցիր զանոնք :  
Գիտոցիր որ առաքինութիւնը իւր պարտուցը հպա-  
տակին է , մռոնալ անօրէն սիրոյ մը յիշատակը ,  
եւ ոչ երբէք իմ ատելի նախանձորդիս անունը տալ ,  
եւ լուռ ու անտրտունջ լսել թշնամւոյս գատապար-  
տութեան վճիռը . գիտոցիր որ քու ամուսինդ քեզի  
ներելով , բաւական վեհանձն ու մեծահոգի է եւ քու  
չկարծածէդ աւելի զգայուն սիրտ մը կը կրէ :

### ՏԵՍԻԼ Գ.

ԱԼԶԻՐ , ՇԵՖԱՆ .

### ՇԵՖԱՆ

ՏԵՇԻ թէ որչափ կը սիրէ զքեղ :

### ԱԼԶԻՐ

Թէ որ կը սիրէ զլո , նախանձն է զինքն շարժողը .  
պիտի մեռնի Զամոր , ես իւր ներումը խնդրելով  
աւելի ամուր հաստատեցի իւր մահուան վճիռը .  
մհ բնչ ընեմ , պիտի չկարենամ փրկել զինքը . բայց  
դուն պահապան զինուորին հաւատարմութիւնը փոր-  
ձեցիր :

## ՇԵՖԱՆ

Ոսկին շլացուց իւր աչուքները ու գնեցինք իւր հաւատարմութիւնը :

ԱԼԶԻՐ

Ուրեմն ժամանակ մի կորսնցըներ , գնա զուրցէ որ . . . :

## ՇԵՖԱՆ

Բայց դեռ յոյսերնիս չկորսնցնենք . Ալվարէ թե ըեւո համողէ իւր որդին :

ԱԼԶԻՐ

Ես չեմ յուսար . ահ , կը դողամ , ՇԵՓԱՆ . թէ որ աղատի ջամոր , ինծմէ հեռու պիտի չուզենայ ասլրիլ , թէ որ զիջանի իմ աղաչանացս ու փախչի՝ ես չեմ կրնար իրմէ բաժնուիլ . այ անգութ կուսաման . . . բայց ինչու կուշանայ այդ զինուորը :

## ՇԵՖԱՆ

Հիմայ հոս պիտի դայ Ջամորին հետ . քու հըմանդ առնելուն պէս մէկէն բանտը վազեց . զիշերն իւր սեւ թեւերովլը կը ծածկէ մեր խորհուրդը . բըռնաւորք կոտորածէն յոգնած եւ արեամբ արբեցած խոր քնոյ թանձրութեան մէջ կը նմչեն :

ԱԼԶԻՐ

Գոնէ զմեղ Ջամորին քովը տանէր այդ պահապանը , եւ կամ շուտով բանար բանտին դռները . ահ , ելիր , Ջամոր , եկուր , քու սիրուհիդ է զքեզ կանչողը , եկուր դիրկս :

## ՇԵՖԱՆ

Բայց թէ որ յանկարծ զիշերուան մթութեան

մէջ վրայ հասնին , խմացուի խարէութիւնը՝ ան առենք պատիւդ ու ամօթն . . . :

## ԱԼԶԻՐ

Ի՞նչ ամօթ . իմ սիրելիս մասնելն է ամօթ . ա՞ն , թէ որ ինքը կորսուի իրեն հետ կը կորսուին նաեւ պատիւս ու սէրս . պատիւն յամօթոյ զանազանելն սորվեցայ Շէֆան . պատիւն իմ սրտիս մէջն է , ինքը կը հրամայէ ինծի աղատել իմ դիւցազունս զորերկինք երեսէ թողուցեր են . ոհ , բնչպէս անուշ է սիրելոյն փրկութեանը պատճառ ըլլալ :

## ՇԵՖԱՆ

ԱՆԱՒԱԹԻԼ ԶԱՄՈՐ :



## ՏԵՍԻԼ Դ.

ԱԼԶԻՐ , ՇԵՖԱՆ , ԶԱՄՈՐ , ԶԻՆՈՒՈՐ ՄԸ

## ԱԼԶԻՐ

Ա՞ն , Զամոր , ալ ամեն յոյս կորաւ . յաղթեցին բռնաւորք , պատրաստ է տանջանքդ . թէ որ չփախա չիս՝ պիտի մեռնիս Զամոր . զնա , ժամանակ մի՛ կորա սընցներ . առ այդ զինուորը քեզի առաջնորդ . հեռուացիր այս անիծեալ դառառէն , խարենք այսպէս դառաճանաց յոյսը . ոհ , կը տեսնաս իմ յուսահատութիւնս . հիմայ դուն միայն կրնաս զքեզ փրկել . մի՛ , իմ ամումնոյս ցամաննը զո՞ն եւ աշխարհիս արատասուացը պատճառ մի՛ ըլլար . փախիր , Զամոր , փախիր , զիշերուան միթութիւնը կօգնէ քու փա-

լորտեանդ . զթմ ինծի ու թող զիս :

## ԶԱՄՈՐ

Դուն , բարբարոսաց գերի , դուն , քրիստոնէի մը ամուսին , դուն , որ այդ չափ սիրեցիր զիս , փախչիլ եւ ասլրիլ կը հրամայես ինծի . լաւ է , բայց կրնան ինծի հետ գալ . ալ տէրութիւն չկայ ինծի . անոք ու անօգնական , լի թշուառութեամբ , քու սիրոյդ նուէր անապատ մը ու սիրա մը ունիմ . առեն մը արքունի պսակ մը կրնայի կապել գլխոյդ :

## ԱԼԶԻՔ

Ա՞հ , առանց քեզի ինչ էր այդ պսակը . բաց 'ի քեզմէ զով սիրեցի ես . եւ ինչ է քու քովդ այդ չնչին տիեզերքը . ահ , ինչուան անապատիդ խորերը քու ետեւէդ պիտի թռչի հողիս . մինակ թող զիս հոս , մաշիլ ցաւոցս մէջ , թառամիլ իմ վիշտերովս , դքեզ ուրանալուս խղճիս խայթերովը տագնապիլ , ուրիշի մը իշխանութեան տակն ըլլալ ու զքեզ սիրել . գնա , քեզի հետ տար իմ երջանկութիւնս ու կեանքս . ինծի թող իմ պարտուցս արհաւիրքը . փառքս ու սիրելիս պէտք է աղաւել միանդաման , երկուքն ալ սրբազն են ինծի , երկուքն ալ անարատ կուզեմ պահել :

## ԶԱՄՈՐ

Քու փառքդ , եւ որն է այն ինծի անծանօթ փառքը . ահ , միթէ զերութիւնը այդ չափ նուաստացնուց զքեզ . ինչ , այդ բռնի երդումդ , քրիստոնէից տաճարը զոր պէտք է ատես դուն , այդ նոր Աստածուածդ , մեր նախահարց աստուածոց սոսկալի

հարուածը , վերջապէս պիտի բաժնեն զքեղ Զամո-  
րէն :

## ԱԼԶԻՐ

Երդուընցայ ես , հոգ չէ որ աստուծոյ :

## ԶԱՄՈՐ

Ո՞չիր մըն է այդ երդումդ . դուն իմ կորոստա-  
երդուընցեր ես . մնաս բարով . կորուխն քու եր-  
դումդ ու քու աստուածդ նաեւ ուսկից կը դարձիմ  
ես :

## ԱԼԶԻՐ

Կեցիր , ճճ , լինչ դառն բաժանում . կեցիր սիրե-  
լիդ իմ Զամոր :

## ԶԱՄՈՐ

Կուսմանն է քու ամուսինդ :

## ԱԼԶԻՐ

ԱՇ , անողորմ , մեոցուր զիս բայց մի՛ նախատեր  
այդ պէս :

## ԶԱՄՈՐ

Յիշէ ուրեմն մեր նախկին սիրոյն բոցը :

## ԱԼԶԻՐ

Քու վտանգդ միայն կը յիշեմ ես :

## ԶԱՄՈՐ

Ոչ այդպէս , ով անգութ . իմ սէրս կարհամար-  
հես դուն :

## ԱԼԶԻՐ

Ո՛հ : չէ Զամոր , անհուն սիրով կը սիրեմ զքեղ .

բայց թող, ես միայն մեռնիմ, վախիր դուն . . .  
ոհ, ինչ զարհուրելի յուսահատութիւն մը կը վարի  
աշուշնիերուդ մէջ . . . Զամոր . . .

## ԶԱՄՈՐ

Անօդուան է :

## ԱԼԶԻՐ

Ո՞ւր կերթաս :

## ԶԱՄՈՐ

Աղասառութիւնս դործածել :

## ԱԼԶԻՐ

Զամոր, խնայէ ինծի . թէ որ դուն մեռնիս, կը  
մեռնիմ ես ալ:

## ԶԱՄՈՐ

Մեռան արդէն Զամոր եւ իւր սէրը . թող զիս .  
ալ բաւական եղան իմ ցաւերս, խոռվեցան միտքս,  
յուզեցան աղիքներս . ուեւ յուսահատութիւն մը կը  
պաշարէ զիս ու կեանքս անտանելի կերեւայ ինծի .  
անցեալն ու ապագան, ճշմարտութիւն եւ ցնորք  
ոչինչ են ինծի համար . ոհ, դարշեցայ ես յաստուա-  
ծոցս, դարշեցայ հայրենիքէս, դարշեցայ ինքղին-  
քէս, ինքղինքէս ալ կուզեմ վախչիլ ու չեմ կրնար:  
Ակրտա ծոյիս մէջ չգտաւ տեղի . հեղձումն, անդուլ  
բարախում, չնչոյ տեղ խորին ու երկայն հառա-  
չանքներ, դո՞ս սիրոյ, անյագ վլրէժխնդրութիւնն ,  
ծարաւ արեան, ոհ, ինչ կեանք . . . եւ ուր սահե-  
ցան իմ խաղաղ օրերս . ինչու մթնցան երկինք, ին-  
չու աեւ ամողեր կը դիզուին զլսոյս վլրայ . . . երակ-

ներուս մէջ բոցատապ կրակ մը կը վաղէ . . . ահ, ինչ ընեմ, ուր երթամ, քեզի դամ, կուսման, գիշերը լմինալու վրայ է, սուղ է վայրկեանս, գօրական, երթանք :



### ՏԵՍԻԼ Ե.

ԱԼԶԻՐ, ՇԵՖԱՆ

### ԱԼԶԻՐ

Ա՞հ, օգնէ ինծի, կը նուազիմ Շէֆան . գնաց, հեռացաւ, ինչ պիտի ընէ, ով սարսափելի վայրկեան, կուսման, տես թէ ինչպիսի դիւցազնէ մը բաժնուիմ քեզի համար . . . Շէֆան, վաղէ դնա Զամորին եաեւէն, տես թէ ապահով է իւր փախուստը . այդ զինուորը պիտի չմատնէ զմեզ : (Կերթաց Շէֆան) Սեւ, սարսափելի գուշակութիւն մը կը ծանրանայ հոգւոյս վրայ . այս օրս, արիւնալից օր մը պիտի ըլլայ : Ո՞վ Աստուածդ քրիստոնէից, յաւիտենից եւ ահաւոր Աստուած՝ եթէ ոճիր մըն է իմ սէրըս այս թշուառ գլխոյս վրայ թափէ վրէժինդրութեանդ կրակները, թող ասլրի, ասլրի Զամոր եւ անփտանդ համնի ինչուանն իւր անապատը, Միթէ դու տիեզերաց մէկ մասին աստուածն են, մէկ մասին հայրը եւ միւսոյն բռնաւորը . այդ արարածոց տմինքն ալ քու ձեռացդ դործքը չեն միթէ . (աղաղակ դրսէն Զամորի անունը կը լսուի) . . . բայց ինչ սոսկալի աղաղակ մը իմ ականչս կը զարնէ . սիրելոյս

անունը կը լսեմ . . . Երկի՞նք , այդ զինուորը մատնեց  
զմեղ . . . աղաղակն երթալով կաւելնայ . . . ահ ,  
մեռաւ Զամոր :



## ՏԵՍԻԼ Զ.

ԱԼԶԻՐ , ՇԵՖԱՆ

## ԱԼԶԻՐ

Դժուն ես Շեֆան . Բնչ կայ , Բնչ տեսար . ահ  
այդ կերպարանքդ չարագուշակ է :

ՇԵՖԱՆ

Ո՞հ , Ազիր . . .

## ԱԼԶԻՐ

Խօսէ , մեռամբ Զամոր :

ՇԵՖԱՆ

Ալ մի յուսար , անդառնալի է իւր կորուսար .  
առաջնորդ զօրականին սաղաւարտն եւ սուրը ա-  
ռաւ ու զինուեցաւ . զօրականն իսկոյն աներեւոյթ-  
եղաւ , Զամոր դէպ 'ի պալատն սկսաւ վազել . լուռ  
ու մութ էր ամեն բան , միայն Զամորին ոտից ձայ-  
նը կը լսուէր որ անվեհեր կուսմանի սենեակը մը-  
տաւ , փուճ տեղը ուզեցի արդիլել զինքը . յանկարծ  
սոսկալի ձայներ լսուեցան , մուցի Զամոր , այդ ա-  
ղաղակը զամենքը արթնցուց , սպայք եւ զօրականք  
ներս թափեցան եւ ես հոս վազեցի քեզի խմացը-  
նելու :

ԱԼԶԻՐ

ԱՇ , ՇԵՎԱՆ , օլնութեան հասնինք :

ԵՒԹԱՆ

Ի՞նչ կընես , ուր կերթաս :

ԱԼԶԻՐ

ՄԵԽՆԻԼ :

ՏԵՍԻԼ Է .

ՄԻԴՐԱՆ , ԱԼԶԻՐ , ԵՒԹԱՆ , ԶՈՐԱԿԱՆՔ

ՄԻԴՐԱՆ

Զօրականք բոնեցէք զինքը :

ԱԼԶԻՐ

Ի՞նչ կըխօսիս . ուր է ջամոր :

ՄԻԴՐԱՆ

Չեմ զիտեր . երթանք Ալղիր , այս է կուտանիր  
հրամանը :

ԱԼԶԻՐ

Ո՞վ բառդ , ով սարսափելի վրէժինողութիւն .  
մեռաւ Զամոր , եւ եւ զեռ կենդանին եմ . ես էի  
չարեացագարտ եւ զուն Զամոր իմ մեղանացո պա-  
տուհասը կրեցիր . . . բայց հոս որո՞ւ ձգեցիր քու սի-  
րելիդ . . . Ալղիր բանաւորաց ձեռքը մատնուած , Ալ-  
ղիր իւր սիրելոյն զրկեն զրկուած , և , լոյս իմ Զա-  
մոր , քեզի կուգամ , քու ծոցդ ահա կը թռչիմես .

ԱԼՅՈՅ ԶՈՐՅՈՐԴ ՀԱՆԳԻՍ

# ՀԱՆԴԵՍ ՀԻՆԳԵՐՐՈՐԴ

ՏԵՍԻԼ Ա.

ԱԼԶԻՐ , ՊԱՀԱՊԱՆՔ

ԱԼԶԻՐ

Վերջապէս բանաւորք կը պատրաստեն իմ տանհանքանքս ալ . խեղճ պահապանք , դուք ալ տիրերէք . բայց ինչու կուլաք , ուրախացէք , հասաւ թշուառութեանս վերջի վայրկեանը , ինան շղթաներս , բացուի բանաս եւ իմ սիրոյս ու անմեղութեանս թեւերուն վրայ բարձրացած յաւիտենական ազատութիւն թռչի հոգիս : Երբ գոռող թշնամոյ մը ձեռքը մատնուեցայ , երբ կորուսի իմ սիրելիս , ան ատենը պէտք էր լալ . . . բայց չեմ գիտեր կենաց եւթէ մահուանս կը մերձենամ . երբ սիրելոյս անունը տամ՝ կը սարսափին պահապաններս . . . :

ՏԵՍԻԼ Բ.

ԱԼԶԻՐ , ՄՈՆԴԵԶ , ՊԱՀԱՊԱՆՔ

ԱԼԶԻՐ

Հմայլ իմ . . .

ՄՈՆԴԵԶ

Ի՞նչ ըովիր , դուստր իմ . ահաւասիլ քու սիրոյդ զարհութելի հետեւանքը . աւանդ . ես եւ Ալվարէ Զաւ

մորին համար թողութիւն կը խնդրէինք . երբ յան-  
կարծ զինուոր մը յուսահատ եւ ահոելի կերպա-  
րանքով ներս յարձկեցաւ . նոյն ինքն Զամորն էր .  
Ճեռքը սուր մը բռնած վազեց , թուաւ ու զարկաւ  
կուսմանը . ամուսնոյդ արիւնը իւր հօրը վրայ ժայթ-  
քեց . իսկոյն Զամոր դադրելով իւր բարկութենէն ,  
Ալվարէին ոտուըներուն ինկաւ եւ իւր որդւոյն ար-  
եամբը ներկուած սուրը անոր տալով և Յաղեցաւ  
վրէժինդրութիւնս , որդւոյդ արեանը մէջ լուացի  
իմ նախատինքս , դուն ալ կատարէ քու պարտքդ ,  
առ բնութեան վրէժն » ըսելով խոնարհեցուց գլու-  
խը եւ մահուան կսպասէր . Ալվարէ հառաչելով ա-  
րիւնաթաթախս որդւոյն դիրկը ինկաւ . մահուան հե-  
ծութիւնք , ողբն ու հառաչանաց աղաղակը արթըն-  
ցուցին պալատականները , վազեցին , մոտան բռնե-  
ցին Զամորը ու սկսան կուսմանի վէրքը պատել .  
Ժողովուրդը բարձրաձայն քու մահդ կուզէ զքեզ  
եղեռան կցորդ կարծելով :

## ԱԼԶԻՐ

Կրնամո . . . :

## ՄՈՒԴԻԶ

Զէ , ես քու վրադ չեմ կասկածիր . չկրնար այդ  
սիրտդ եղեռան գրգռել զքեզ . եւ սակայն պիտի  
մեռնի ամուսինդ սիրելուոյդ տուած հարուածէն . Զա-  
մոր ալ պիտի ընդունի իւր յանդգնութեան պատու-  
հասը . զքեզ ալ պիտի դատապարտեն , պիտի մեռ-  
նիս Ալզիր , ահ , ինչ ընէ հօր մը սիրտը , երթամ  
գոնէ վերջին ճիզս թափեմ , քեզի ներումն ու ինծի  
մահ ինդրեմ :

## ԱԼԶԻՐ

իմ ներումս , իմ բռնաւորներէս , աղաչըլ անոնց ,  
դժւն , Հայր իմ , ոչ . ապրէ դուն , այս միայն կը  
խնդրեմ քեզմէ . կը ցաւիմ Կուսմանի վրայ , մանա-  
ւանդ այդպիսի մահուան արժանի ըլլալուն կը ցա-  
ւիմ . Զամոր իւր վրէմն առաւ , յանդգնութիւն չէ  
այդ . ես սէր կը կոչեմ եւ չեմ կրնար մնդադրել  
զինքը . . . բայց պիտի մեռնի Զամոր , իսկ ես . . .  
Հայր , մի արդիլեր իմ մահս :

## ՄՈՒԴԵԶ

Երկինք , ձեր դժութիւնը կը մաղթեմ :

ՏԵՍԻԼ Գ.

## ԱԼԶԻՐ

Ո՛վ Աստուած , ոչնչացնը դիս , ինչ , իմ նոր  
Աստուածս այսպէս անոք ու անօգնական կը թողու-  
զիս . ահ , ինչու չեմ կրնար իմ ձեռքիս հարուածը  
ինծի գէմ գարձնել . ուրացայ ես իմ աստուածներս  
որ կը ներէին այն կամաւոր մահը , մահը իմ վերջին  
ապաէնս : Միթէ ամենքը պիտի չհամնին կենաց  
ասպարիզին այն վերջի ծայրը . ոճիր մըն է այդ  
վայրկեանը վութացնելը . պէտք է ուրեմն թշուա-  
ռութեան բաժակին ինչուան վերջի կաթիլը քամել .  
եւ սակայն ինչու թող տրուած է այդ բարբարոս  
ծողովութեան այնչափ անպարտ արիւն թափելն եւ

ոչ ինծի միայն իմ արխմանա . . . ահ , Զամոր , պիտի  
մեռնիս ահոելի տանջանաց մէջ , բայց . . . մի յու-  
սար մինակ մեռնիլ :

---

### ՏԵՍԻԼ Դ.

ԱԼԶԻՐ , ԶԱՄՈՐ (ՇՂԹԱՅԱԿԱՊ), ՊԱՀԱՊԱՆՔ

---

### ԶԱՄՈՐ

Հոս ուրեմն մեռնինք երկուքնիս ալ : Ալզիր օ-  
րէնքն կը դատապարտէ զքեզ . դեռ կենդանի է  
կուսման , չկրցաւ այս դողդոջուն ձեռքս մահացու-  
հարուած մը կշռել . Զամորի թշուառութեանը վերջ  
տալու համար կապրի կուսման , կապրի քու արի-  
նըդ ալ թափելու համար : Մահուան ստուերովը ծան-  
րացած աչուրները . պիտի տեսնան մեր դիակոնքը  
ու վերջին անդամ մըն ալ բռնաւորաց բերկրամնօքն  
հեշտացած , մեր արեան հոտէն արբենալով , պիտի  
փէ խոր հոգին . Ալվարէի յանձնուած է մեր մահ-  
ուան վճիռը . ահ ես եմ քու կորսաւանդ պատճառ  
ինծի համար կը մեռնիս դո՞ւ :

### ԱԼԶԻՐ

Բայց քնու քովդ պիտի մեռնիմ , հոգ չէ որմու հա-  
մար . օրնէ իսմ բաղդս , օրնէ այն հարուածը որ իմ  
հարսանեացս կապերը պիտի խղէ . յիշէ որ այդ վայր-  
կեանը միայն առանց խղճի խայթերու կրնամ սիրել  
զքեզ , մահը միայն կրնայ զմեզ միացընել . ահ ,  
Զամոր , մեզի համար կանգնուած մահուան կառոյ-

ցը խորան մըն է ուր երկրորդ անգամ սիրտս քեղի  
նուէր պիտի ընծայեմ. հոն ովհտի քաւեմ անհաւա-  
տարմութեանս ակամայ ոճիրը . բայց ինչու չփո-  
թար Ալվարէ :

## ԶԱՄՈՐ

Ահա ինքը , աչուըները արցունքով լեցուած . . . .

## ԱԼԶԻԲ

Ա՛հ , երեք թշուառք :

## ՏԵՍԻԼ Ե.

ԶԱՄՈՐ , ԱԼԶԻԲ , ԱԼՎԱՐԷ

## ԶԱՄՈՐ

Երկինք կուզեն որ դուն իմ մահս վճռես . մի  
խոռվիր , խօսէ Ալվարէ , տես թէ ինչպէս անպեհեր  
իմ մահուանս կսպասեմ ես . քու որդւոյդ դաւա-  
ճանը ու Ալվարէի աղատարարը դահճաց ձեռքը յանձ-  
նէ շուտով . բայց Ալզիր ինչ ըրաւ ձեզի , ինչու ան-  
մեզն 'ի կենաց կուզես զրկել . միթէ բռնաւորք ի-  
րենց ատելութեան բոցը քու որտիդ մէջն ալ չնչե-  
ցին . բայց կրնայ անիրաւ վրէժխնդրութիւն մը բը-  
նակիլ այդ սրախդ մէջ որ լի է գորովանօք , ար-  
դարոյ անունէն հրաժարել ուրեմն կուզես դուն եւ  
անպարտ արեան մէջ թաթիւել այդ մաքոր ձեռ-  
ուըներդ :

## ԱԼԶԻԲ

Ո՛ո քու վրէժդ , առ որդւոյդ վրէժն , բայց մի  
կասկածիր իմ անմեղութեանս վրայ . ամուսին կուս-

մանի , այդ անունը միայն կիմացընէ քեզի որ եթէ զիտնայի վտանգն վտանակ մատնելու զինքը կըբնայի պաշտպանել . մեծարեցի ես քու որդիդ , այս դառնացեալ սիրոս ատեց զինքը , բայց պահեց իւր երդումը . թող քու ժողովուրդդ զիս սպանութեան կցորդ համարելով դատապարտէ զիս , բաւական է որ դուն ճանչնաս իմ անմեղութիւնս . արդ եթէ մեռնի ջամոր պէտք է ես ալ մեռնիմ , այս միայն կը խնդրեմ ու քու վրադ կը ցաւիմ :

## Ա.Լ.Վ.ԱՐԵ

Ի՞նչ տեսարան , ով Աստուած , սիրոյ եւ ատելութեան . որդւոյս դաւաճանը իմ կենացս ազատարան է . ջամոր , այն , քեզի պարտկան եմ իմ օրերս , սակայն սուզ գնեցի ես այդ չնորհքդ . հայր եմ բայց մարդ եմ , չեմ կրնար որդւոյս արիւնը անկարեկիր աչքով տեսնալ . բայց այդ արևան ձայնին հետ որ վրէժ կը պահանջէ քու բարերարութեանց ցըդ ձայնն ալ կը լսեմ ես : Եւ դուն Ալզիր որ իմ աղջիկո եղար եւ նոյն անուամբ դեռ եւս կը կոչեմ դքեզ , տեսէք անորդի միացած հօր մը թափած արցունքները եւ մի յուսաք որ ձեր կորստեամբը ուղենայ որբել այդ արցունքները , չէ . չեմ կրնար այս ցաւերուս վրայ նոր ցաւեր աւելցնել , բարերար , դուստր եւ որդի կորսնցնելով միանգամբյն : Օրէնքն կը դատապարտէ զձեզ , վրէժմինդրութեան որովը կը զինէ վշտացեալ հօր մը ձեռքը . եւ ես չմերժեցի այդ ահաւոր պաշտօնս ու եկայ երկուքնիդ ալ աղատել :

## ԶԱՄՈՐ

ԱԼՂԻՐԸ կրնամ աղատել , ահ , խօսէ , ինչպէս :  
ԱԼՎԱՐԵ

Մէկ Աստուած մը պաշտելով . բառ մը , Զամոր ,  
քու եւ Ալղիրի բաղգը կրնայ փոխել . մեր օրէնքն  
կը ներեն հաւատացելոց . աղաւինէ ուրեմն , եկու-  
ծածկուէ անոր թեւերուն տակ , որպէս զի երկնից  
պաշտպանութեան հովանին տարածոի ձեր գլխուն  
վրայ . այդ վաեմ օրինակովդ կը դադրեցնես ժողո-  
վորդեանս բարկութիւնը . արիւնդ սրբաղան ու ի-  
րենց եղբօրը արիւնը կըլլայ եւ ձեր գլխուն վրայ  
կախուած վրէժինդրութեան սուրերը կիյնան ու կը  
փշրին . ոհ , Զամոր , գոնէ այդ աղջկան ծաղիկ հա-  
սակին խնայէ , այո , 'ի սիրոյդ ու բարութիւնէդ կը  
յուսամ ես . տես միամսդամ ինչպիսի դառն աղէտից  
մէջ կը թողուս զմեղ քու մահուամբդ . ոհ . Զամոր ,  
թող որ երկրորդ անդամ քեզի իմկեանքս պարաը-  
կան ըլլամ . . . անդութ , չայր մը , իւր որդւոյն կո-  
րըսաեանը վրէժն հանելու համար կաղաչէ քեզի որ  
ապրիս . քրիստոնեայ եղիր , ու լոեցուր որդւոյս ա-  
րիւնը :

## ԶԱՄՈՐ

Ալղիր , այդ աստիճան գգութնը կեանքը ու իմ  
ամօթովս գնենք զայն . թողում ես իմ աստուածնե-  
րըս կուսմանի աստուծոյն համար . (առ Ավարէ) եւ  
դուն քու զաւկէդ աւելի կուզես իմ բռնաւորս ըլ-  
լալ . կուզես որ Ալղիր մեռնի կամ ես մատնիչ ապ-  
րիմ . ահ , քու կենացդ տէր եղած ատենս եթէ ըս-

տիալէի զքեղ ուրանալ կրօնքդ կամ մեռնիլ , խօսէ ,  
Ակուրանայիր հայրենեացդ աստուածը :

## ԱԼՎԱՐԵ

Կաղաչէի իմ Աստուծոյս որ լուսաւորէր այդչափ  
բարեօք ճոխացեալ հոգիդ որ թէպէտեւ կոյր եւ  
խաւար՝ սակայն քոխատոնէի մը արժանի :

## ԶԱՄՈՐ

Երկի՞նք , ինչ դաւն տագնապ . որն ընտրեմ ,  
ման եթէ կեանք , Ալդիր զքեղ կորսնցնեմ եթէ իմ  
աստուածներս . խօսէ . դուն սիրեցիր զիս , դուն դա-  
տաւորս եղիր . զիս ու իմ աստուածներս քեզի կը  
յանձնեմ , բայց չեմ կարծեր որ Զամորի նախատինքն  
ուղենաս :

## ԱԼԶԻՐ

Մտիկ ըրէ . զիսես որ այս սիրտս քեզի ընծա-  
յեր էի ես , ու հայրս ուրիշի մը տուաւ եւ այնպէս  
հարկադրուեցայ անոր Աստուածն ճանչնալ . բայց  
քրիստոնէից օրէնքէն հոգիս հիացած ճշմարտութեան  
ապաւինեցաւ եւ այս շրթունքներս իրաւամբ ուրա-  
ցան հայրենեացս աստուածները . բայց բոլոր սրտով  
պաշտած աստուածն ուրանալը՝ վատ ու անմներելի  
ոճիր մըն է եւ միանգամայն անսարդանքնոր ընդու-  
նած Աստուծոյն . չէ , ատելի է վատութիւնը այդ  
վսեմ հոգւոյդ . մեռնինք , Զամոր , բայց մահուամբ-  
քըդ ալ ինձի արժանի եղիր , եւ թէ որ լուսոյ ճա-  
ռագայթ մը չծագեր սրտիդ մէջ . առաքինութիւնդ  
կը խօսի , մտիկ ըրէ իւր ձայնին :

## ԶԱՄՈՐ

Ծանօթ է ինձի քու սիրտդ . մեռնինք ուրեմն . . . :

ԱԼՎԱՐԵ

Անգնելթ որդիք , երկուքնիդ ալ կորստեան կը փափաքիք , երկուքնիդ ալ բիւր վերքեր կաւելցը նէք սրտիս . ժամանակը կարճ է , աղաղակն երթաւով կը բարձրանայ . . . :

## ՏԵՍԻԼ Զ.

ԱԼՎԱՐԵ , ԶԱՄՈՐ , ԱԼԶԻԲ , ՄԻԴՐԱՆ

## ՄԻԴՐԱՆ

Տես այդ ողբալի տեսարանը Տէր , վիրաւորեալ որդիդի իւր վերջի շունչը քու գրկացդ մէջ կուզէ տալ . ժողովրդեան խուռն բազմութիւնը հոս կը դիւմէ մեղապարտից արիւնը թափելու :



## ՏԵՍԻԼ Է.

ԱԼՎԱՐԵ , ԶԱՄՈՐ , ԱԼԶԻԲ , ՄԻԴՐԱՆ , ԿՈՒՍՄԱՆ  
(Վիրաւոր) ՍՊԱՆԻԱՅԻԲ , ԱՄԵՐԻԿԱՅԻԲ , ԶՈՐԱԿԱՆԻԲ ,

ԺՈՂՈՎՈՒՐԴԻ

## ԱԼՎԱՐԵ

Ա'ն , որդեալ իսմ , մահուան ցուրտ ձեռքը դըսպեր է ճակտիդ . դքեզ այսպէս կիսամթու տեսնալու համար ապրեցայ ես . ան , սիրուն որդեալ :

## ԶԱՄՈՐ

Աղատեցէք Ալզիրը , թող ես մեռնիմ :

## ԱԼԶԻՐ

զէ , Զամոր , մեռնինք , Երեքնիս ալ միատեղ  
մեռնինք :

## ԶԱՄՈՐ

(Առ Կուսան) Խնչուան մահուանդ օրհասական վեր-  
ջի վայրկեանն ալ միշտ արթուն է կատաղութիւնդ .  
Եկուր , քանի որ կենդանի ես , տես իմ արեանս  
թափուիլը , Զամոր քեզի սորվեցընէ թէ ինչպէս  
պէտք մեռնիլ :

## ԿՈՒՍՄԱՆ

(Առ Զամոր) Երկինք ուշացոցին իմ մահս , որ-  
պէս զի վերջին անգամ մըն ալ տեսնամ զքեզ .  
(Առ Հոյրն) Վախստական հոգիս կենաց ամեն կա-  
պերէն աղատած՝ քու դիմացդ կը կենայ , Հայր ,  
բայց քեզի նմաննելու համար . ահա կը մեռնիմ ես .  
խարէութիւնն անհետացու , ճանչցայ տկարտութիւնս  
բայց կենացս վերջի վայրկեանք . իմ հպարտու-  
թեանս ծանրութեամբ ճնշեցի աշխարհքս , Երկինք  
երկրիս վրէժն կը հանեն . եւ սակայն իմ կեանքս  
բաւական չէ վոխարէն այնչափի թափած արեանս .  
Երջանկութիւննեւ իշխանական բարձրութիւնք կուր-  
ցուցին զիս , խկ մահք կը վարատէ աչքիս վրայ  
տարածուած մշուշը , եւ կը համբուրեմ այն ձեռ-  
քը որով Աստուած պատուհասեց զիս : Դեռ այս  
պալատիս տէրն եմ ես , դեռ մինակ կը հրամայեմ  
հոս , ես միայն կընամ ներել եւ կը ներեմ Զամորին .  
ասլրէ դուն , բարձրամիտ թշնամի , աղատ ես , բայց  
յիշէ քրիստոնէի մը պարտքը եւ մահք : Մոնղէզ , եւ  
դուք Ամերիկացիք , դուք որ իմ վառասիրութեա-

նըս զոհ եղաք , դուք ալ յիշեցէք որ իմ զզջումս ու  
զթութիւնս քաւեցին իմ ոճիրներս . թող իմանան  
այս նոր աշխարհնքս ու իւր թագաւորները թէ քը-  
րիսառնեայք իրենց օրէնք տալու համար ծնած են ,  
Քուեւ իմ Աստուծոյս տարբերութիւնը ճանչցիր , Զա-  
մոր , քու աստուածներդ վրէժինգրութիւն եւ մահ  
հրամայեցին , իսկ իմ Աստուածս ներել քեզի :

## ԱԼՎԱՐԵ

Ո՞վ առաքինիդ իմ որդեակ :

## ԱԼԶԻՐ

Ահեղ զարմանք , ինչ փոփոխութիւն , ներթևմն :

## ԶԱՄՈՐ

Չեմ գիտեր . . . սիրառ . . . զիս ալ զզջման կու-  
ղես ստիպել :

## ԿՈՒՍՄԱՆ

Ալ աւելին կուղեմ ես , կուզեմ որ զիս սիրես  
դուն . իմ անզթութեամբս ու հարսանեօքս շատ  
թշուառ ապրեցաւ Ալզիր . այս դողդոջուն ձեռքո-  
վըս ես անձամբ զինքը քեզի կուտամ , մի արհա-  
մարներ իմ ընծայս , դուն արժանաւոր փեսայ , ին-  
քը հարս քեզի արժանի . դարձէք կանզնեցէք ձեր  
կործանեալ հայրենիքը , հաստատեցէք գահերնիդ  
բարեբաստիկ եւ երջանիկ ապրեցէք , բայց մի՛ ա-  
տէք զիս , եւ եթէ կարելի է , անջինջ պահեցէք  
իմ յիշատակս : Իսկ զուն , Հայր եղիր այդ երջա-  
նիկ ամումնաց . երկնից օրհնութիւնը մաղթէ իրենց  
զլխուն , ասկէ վերջը Զամոր քու որդիդ է :

## ԶԱՄՈՐ

Ո՞ւր ենք, Ալղիր . ինչ, հարազատ եւ ձշմարիս քրիստոնեայք այդչափ առաքինութիւն ունին : Ա՞հ այդ օրէնքն որ այդպիսի վսեմդիտառութիւնն մը կազդէ սրտի, այս, կը հաւատամք, քրիստոնէից Աստուծոյն օրէնքն է այդ . սիրեցի ես բարեկամութիւնը, մեծարեցի առաքինութիւնը, բայց այդ հոգւոյ վսեմութիւնը վեր է իմկարողութենէս . ահ, ամօթն ճակտիս վրայ կը ծանրանայ . . . խղճիս խայթերը . . . Ա՞հ, կուսման, հիմայ կը սիրեմ դքեզ, ու քու ոտուըներուդ իյնալով . . . :

ԱԼԶԻԲ

(Ոտքը իյնալով) Ա՞հ, կուսման, գիտցիր որ Ալղիր այս վայրկեանս քեզի համար մեռնիլ կը փափաքի . Զամոր եւ կուսման կը կեզեքեն հոգիս, ցաւ, դղջումն, ահ, ես միայն մեղապարտ եմ ու անարժան թողութեան :

## ԿՈՒՍՄԱՆ

Ներեցի, Ալղիր . արցունքներդ քաւեցին . . . ահ Հայր . . . վերջին անգամ մօտեցիր ինձի . . . երջանիկ ասլրէ . . . սիրէ Ալղիրը . . . Զամոր . . . քրիստոնեայ . . . եղիր . . . կը մեռնիմ . . . մնաք . . . :

ԱԼՎԱՐԵ

Ա՞հ, որդեակ իմ, որդեակ իմ . . . բայց ոչ, չեմ լար . մեր թշուառութեան մէջ Աստուծոյ արդարաւթեան ձեռքը կը տեսնամ ես որ զարնելու ատենն ալ կը բժշկէ կարելէր սրտերը :

ՎԵՐՋ

## ՎՐԻՊԱԿՔ

---

Էջ.	Տող.	Վրիպակ.	Ուղիղ:
Ամենները էով կարդա :			
1	14	երեզման	գերեզման
6	16	բնաչինչ	բնաջինջ
7	14	եղեր	եղիր
12	21	է	էր
23	14	Աստուծոյ անծանօթ	անծանօթ Աստուծոյ և
		անդութ	անդութ
26	7	ոճեր	ոճիր
28	13	թշուառութեանը	թշուառութիւնը
30	4	ԶԱՄՈՒՐ	ԶԱՄՈՐ
30	18	աղետաբեր	աղէտաբեր
33	1	աղետիցս	աղէտիցս
35	15	ամպատարին	ապատամբին
53	13	ըսիր	ըրիր



2531

2532

2533

9-49

12013



2531

2532

